

19949

Ржевский

Ржевский

управления

329.14
h-68

1918



15 JAN 2010
6 5 FEB 2007

329.141
h-60


1443

329.14

h-68 Իշխանութեան

ԴԻՄԱԿՆԵՐԸ


ՊԱՏՌՈՒԱԾ



(ՈՎՔԵՐ ԲԵՆ
ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ)



БАКУ,
Типографія „ТРУЖЕНИКЪ“
Прикаспійк. Союза Потребит. О-въ
„Кооперація“
1918.



26 APR 2013

19949

493

Բ. Ի Շ Խ Ա Ն Ե Ա Ն

300-

1285-10


329.141

h-60

ԴԻՄԱԿՆԵՐԸ ՊԱՏՈՒԽԱԾ

1005
869/6

(Մաքեր և գնահատումներ բօլշեվիկների մասին)



1943



Բ Ա Ք Ա Ի
Տպարան «Տրուժենիկ» Սպառզական Ընկ. Կոօպերացիա» Միութ.
1918

Ե Ր Կ Ո Ւ Խ Օ Ս Վ

Ի՞նչ է ներկայացնում իրանից բօլշվիզմը իր «տեսական աշխարհահայեցքով» և վաղեմի անցեալով։ Ո՞րն է նրա «սկզբունքային տեսակէտը» դէպի պատերազմը և յեղափոխութիւնը, որպէս պատմա-հասարակական երևյթներ։

Այդ հարցերի մասին չէ զրուցելու մեր այս գրքոյից։ Սրա նպատակն է համառօտ ուրուագծերով քննական դիտողութիւնների առարկայ դարձնել բօլշվիկական հոսանքի ժամանակակից գործնէութիւնը, նրա մերձաւոր անցեալը, երբ օպօգիցիայի մէջ էր գտնւում նա և նրա այժմեան դիրքը, երբ իր փափագած քաղաքական տիրապետութեան կատարին է հասել նա։

Մի փոքրիկ և առժաւանակեալ փորձ է սա՝ քըրքըրելու խաբուսիկ խօսքերի ու խոստումների և տըխուր գործերի այն աղաղակիչ հակասութիւնների քաօսը, որ ստեղծել են և շարունակում են ստեղծել մեր օրերի ասպետները ոուս պետական և հասարակական կեանքում։

Բ. Ի



21698+

Բաքու
1917 թ., դեկտեմբերի 15-ին:

I.

Առուած է՝ տուբ օպօղիցիային իշխանութիւն և այսուհետեւ իմացիր նրա խակական Փիզիօնօմիան:

Բոլշևիկական թեր պատկանում էր այն կարգի օպօղիցիային, որը բուռն տենչանքներով և լարուած էներգիայով ձգտում էր քաղաքական իշխանութեան: Նրա բոլոր փորձերը՝ խաղաղ ազիտացիայից սկսած մինչև ուղնագութիւնների բոլոր տեսակները՝ իշխանութիւնը խորհուրդների ձեռքը յանձնելու համար, ապարդիւն անցան, քանի խորհուրդների կենտրոնը գտնուում էր դեմօկրատական բլոկի (մինչեվիկների և սոց.-յեղ ների) ապահով բազուկների մէջ: Բոլշևիզմը անցաւ իր լոգունգների մասնկութեան և բարոյտկան տապալման կուրսերը, երբ Բան, ու Զին, պատգամ, բոլոր խորհուրդների համառուսական կրկնակի համագումարները (մարտ և յունիս ամիսներին) և համառուս գեմօկրատական խորհրդակցութիւնը (սեպտեմբերին) ջախջախիչ մեծամասնութեամբ և հեղինակաւոր ձայնով մերժեցին բոլշևիկների արկածախնդրական բեցեպանները:

Բայց թունաւորուած օպօղիցիան հանգիստ չէր առնում: Նա սպառել էր խաղաղ կոսուի բոլոր միջոցները, սպառել էր խօսքի ու քննադատութեան իր ողջ արսենալը՝ վայելելով գրա համար կատարեալ ազատութիւն խակա կան գեմօկրատիայի և զուարիւն յեղափոխականների հասա-

I.

Ասուած է՝ տուր օպօզիցիային իշխանութիւն և այնուհետեւ իմացիր նրա խոկական ֆիզիօնօմիան:

Բօլշևիկական թեր պատկանում էր այն կարգի օպօզիցիային, որը բուռն տենչանքներով և լարուած էներգիայով ձգտում էր քաղաքական իշխանութեան: Նրա բոլոր փորձերը՝ խաղաղ ազիտացիայից սկսած մինչև ոտքնագութիւնների բոլոր տեսակները՝ իշխանութիւնը խորհուրդների ձեռքը յանձնելու համար, ապարդիւն անցան, քանի խորհուրդների կենտրոնը գտնուում էր դեմօկրատական բլոկի (մենցեվիկների և սոց-շեղ ների) ապահով բազուկների մէջ: Բօլշևիզմը անցաւ իր լօգունզների սնանկութեան և բարոյական տապալման կուրսերը, երբ Բանու Զին, պատգամ, բոլոր խորհուրդների համառուսական կրկնակի համագուռաքաները (մարտ և յունիս ամիսներին) և համառուսական զարգացման կուրսերը (սեպտեմբերին) ջախջախիչ մեծառանութեամբ և հեղինակաւոր ձայնով մերժեցին բօլշևիկների արկածախնդրական բեցեալանները:

Բայց թունաւորուած օպօզիցիան հանգիստ չէր առնուած: Նա սպառել էր խաղաղ կոռուի բոլոր միջոցները, սպառել էր խօսքի ու քննադատութեան իր ողջ արսենալը՝ վայելելով զրտ համար կատարեալ ապատութիւն խոկական դեմօկրատիայի և զուարիւն յեղափոխականների հասա-

բակական տիրապետութեան օրերին։ Խայթուած ու տապալուած օպօգիցեան դիմեց զարտուղի ճանապարհների. նա թողեց յեղափոխական երկրի ազատ քաղաքացուն վայել գեմոկրատական-խաղաղ գործելակերպը — գաղափարի ոյժը, մշանոր գէնիր եւ անրոնադաս համոզւնելի ճանապարհը — և դիմեց բունի գործողութիւնների օդնութեան, կոպիտ ոյժի բունթարական քաղաքականութեան։ Յունիսի 10-ի փորձը, երբ բոլշեվիկական ֆրակցիանյանձնարարում էր Պետրոգրադի բանւորութեան ու զօրքին զուրս գալ ճրապարակ զինուած դեմոնստրացիայով և ստիպել այնժամանակ իր նիստերն ունեցող խորհուրդների համառուսական համագումարին՝ բոլշեվիկների առաջարկած իշխանութեան վերաբերեալ լօգունքն ընդունելու համար, ուրիշ բան չէր, բայց եթէ բունթարական քաղաքականութեան մի տիսուր ուվերտիւր, որ իր բնի մէջ բնկ խեղտուելով, կատարեալ ֆիասկոյի հանդիպեց զգաւոտ ու ողջախոն գեմոկրատիայի կողմից։ Դէպի յետօրեակին բոլշեվիկների կենտրոնական օրգանը ցինիկ ինքնահաւանութեամբ միմիթարում էր «ընկերներին», որ փորձը յետաձգել, չի նշանակում ընդմիշտ խափանել այն։

Եւ, իրաւ, պէտք է արդարութիւնը տալ բոլշեվիկների հետեղականութեան այդ հարցում։ Նրանք միայն յետաձգել էին զինուած ապստամբութիւնը մինչև «յարմար ու պատէն բոպէն»։ Հազիւ մի ամիս անցած ընձեռեցին նըրանք տեսչացած «առիթը» (իմա մինխատրական կրիզիսը յուլիսեան օրերին) և ազատ երկրի յեղափոխական մայրաքաղաքում հնչեց եղբայրասպան կռուի տիսուր շեփորը. յուրիսի 3—5-ին եղած արիւնահեղ սկանդալը ուրիշ բան չէր, բայց եթէ դարձեալ ֆիասկոյով վերջացած առաջին գերիւտը բոլշեվիկների բունթարական քաղաքականութեան։ Երդուեալ դաւագիրները (զարուհին) պահ մի պատին

սեղմուեցին, ծուղակ մտան, խըսունջի պատեանում թագ-նուեցին և միայն պարապի յետելից էին քարեր նետում։

Բայց ահա վրայ հասաւ նրանց հարսանիքը. Կօնիւլիպի գէպը տօնական ցնծութիւն պատրաստեց բոլշեվիկների համար և առատօրէն ջուր ածեց նրանց ջրաղացի վրայ։ Անխոնջ անարխիստները շարունակեցին իրանց տւերիչ գործը բացարձակ ապստամբութեան կոչերով՝ տգէտու երերուն մասսաների առաջ խոստումների և վարդադոյն յոյսերի մարգարիտներ կուտակելով։

Եկաւ օրհասական «ճակատամարտի» վերջին ժամը. իրականացաւ բոլշեվիկների «սրբազն ուխտը»։ Քաղաքացիական պատերազմի անխոնյ հրդեհով, արեան ցողերի կարմիր արածեաներով հարթեցին նրանք իրանց ճանապարհը գէպի իշխանութեան բարձունքները և նոկտեմբերի 24—25-ից ՚ի վեր տիրացան նրանք պետական մեխանիզմի կենտրոնին՝ առնելով իրանց երկաթէ ճիրանների մէջ մայրաքաղաքների քաղաքական բախտը։

Այն ֆրակցիան, որը գեմոկրատիզմի գրօշակը պարզած՝ գեմօսի գերիշխան և անբռնադատ կամքի անունով էր երդուում առաջ, բռնացաւ այժմ երկրի ազգաբնակութեան և կազմակերպուած գեմոկրատիայի գերագոյն մեծամասնութեան կամքի դէմ, կատարեց իր օսք ձ'էտա սրի ու հրի միջոցով և փաթաթել ջանաց ընդհանրութեան շըլինքին իշխանութեան չկամեցած մի ձև։ Այն ֆրակցիան, որ Ցիմմերվալդիզմի գրօշակը պարզած՝ կոկորդ էր պատուում համաշխարհային արիւնահեղ սպանդանոցի գէմ և սենտիմենտալ քարոզների մեղմալար ներբողներով թըշնամական գօրաբանակների «եղբայրացման» գաղափարն էր շեշտում ուղղմանակատում, ահա այդ ֆրակցիան ծաւալեց իսկական եղբայրասպան արիւնհեղութեան մի անլուր եղեսն՝ զօրքի գէմ, բանւորութիւնը բառորու-

թեան դէմ, դեմօկրատիան դեմօկրատիայի դէմ, յեղափոխական օրդանները իրար դէմ ծառացնելով. մի տակտիկա, որի նմանը կարելի է գտնել միայն ցարի կառավարութեան ջարդատար քաղաքականութեան տարեզրութեան մէջ, երբ գրգռում էին ժողովուրդները. ժողովուրդների դէմ:

Դա սօցիալգեմօկրատիզմի քղանցքի տակ պարուրուած վատաշիպ անարխիստների առաջին դիւնեկի էր, որ անխնայ պատուելով մատնեց նրանց հարազատ դէմքը:

II.

Քոլշեվիկների առատօրէն տուած խոստումների մէջ կենտրոնական առանցքի արժէք էր ստացել, ինչպէս յայտնիէ, նրանց բազմիցս կրկնած ու ծալմած եռանիշ լօզունզը՝ «հաց, ազատութիւն և խաղաղութիւն»։ Դեմագօվիական արուեստի բոլոր պրիօմներով խարում, մոլորեցնում և գրգռում էին մասսաներին, որ Փամանակաւոր կառավարութիւնը ոչինչ չի անում ալարենաւորման ճգնաժամը մեզմելու համար, որ նա բռնանում է ազատ խարքի ու ազիտացիայի դէմ, հալածում է սօցիալիստներին (իմա քոլշեվիկներին), որ կառավարութեան անդամները, իրեն «կապիտալիստների ազենաններ», չեն ցանկանում վերջ տալ պատերազմին և խաղաղութիւն կնքել, ծառայում են դաշնակիցների շահերին և այլն։ Իսկ եթէ իրականանայ քոլշեվիկների փայփայած իղձը, ժողովուրդը եւ հաց կունենայ առատօրէն, եւ իդէալական ազատութիւն, և ընդհանուր դեմօկրատական ~ արդար (ուրածմանը)

խաղաղութիւն։

Ով ծանօթ է քոլշեվիկական դատելակերպի սովորական ժարգոնին, նրա ականջում մինչև այժմ էլ ննչում են պրօֆեսիոնալ դեմագօղների նախահոկեմբերեան քարոզութեան այդ սիրուած շաբլոն քրազները։

Ամեն մի դատելու ընդունակ քաղաքացու համար պարզ պիտի լինէր սկզբից և եթ, որ ոռւս երկրի տնտեսութեան քայլայումը և պարենաւորման նմանը չեղած ճգնաժամը պատերազմի օրով միապետութիւնից մնացած մի տխուր ժառանգութիւն էր, մի ահաւոր պատուհաս յեղափոխութեան գլխին, որի դէմ պայքարելու և կազմալուծւած փունկցիաները կանոնաւորելու ծանր ու պատասխանատու գործի համար յեղափոխական դեմօկրատիան՝ իր ներկայացուցչական մարմիններով, պիտի լարէր իր ամբողջ էսերգիան և համագործակցութեան հրավիրէր երկրի բոլոր թարմ, կենդանի և նուաճուած ազատութիւնների ամրապնդումով շահագրգոււած տարբերին։ Սօցիալիստական բոլոր հոսանքներն ու ֆրակցիաները պիտի ամեն կերպ աջակցէին գործերի փաստական դեկտավարութիւնը ստանձնած դեմօկրատիային և նրա հաւանութեամբ ու մշակած գեկլարացիայով կեանքի կոչած ժամանակաւոր կառավարութեան՝ պարենաւորման պատուհասի դէմ մաքառելու և ազգաբնակութեան տարերայնորէն աճող տրատնջը մեղմելու համար։

Միայն մի հասարակական խաւ կայ ոռւս երկրի մէջ, որ ըստ ամենայնի շահագրգոււած էր հացի խնդրի շուրջը դառնացնելու մասսաներին նոր կարգերի դէմ. դա յեղափոխութեան և ժամանակաւոր կառավարութեան բացայաց թշնամիներն էին, Մարկովների և Զամբալովսկիների կուսակցութիւնը՝ այդ պատուանդանը բիւրօկրատական կառավարութեան, որի վերականգման համար պատրաստ էին նրանք գեողք իջնել և սատանաների հետ զաշն կապել։ Այդ ըէակցիօն տարբերի մութ ագենտներն էին, որոնք խանութների առաջ պոչ կապած մասսաներին փսփտում էին, թէ ինչով են լաւ նոր կարգերը հնից, երբ

շարունակւում են նոյն քաղցն ու զրկանքները, թէ հսկ օրով որոշ կարգ, կանոն, ապահովութիւն կար և աղին:

Ծայրահեղ աջից եկած այդ թունաւոր ազիտացիային գուգաղիպում էր ծայրահեղ ձախից եկած նոյնքան թունաւոր և խաբուսիկ-գայթակղեցուցիչ խոստումներով աւելի վասակար ազիտացիան: Ծայրահեղ ձախակողմը աւելի ազատ ու համարձակ գրգռում էր մասսաներին ժամանակաւոր կառավարութեան և գեմօկրատիայի միւս թերթի դէմ: Երկուսի գործելակերպը համարժէք էր ամենազիմանակաւոր կէտում, երկուսն էլ յարակաւ և բացասական քննադատութիւններ էին՝ ուղղած յեղափոխական կարգի կառավարութեան և այդ չափով նաև տիրապետող գեմօկրատիայի պրեստիժի դէմ: Նրանց տարբերութիւնն արգէն թագնուած էր գործելակերպի յետև. ծայրահեղ աշակողմը բէակցիայի սպասաւորների բանակն էր, ծայրահեղ ծախակողմը՝ անարխօ-սինդիկալիստների բանակը, առաջինը ձգտում էր միապետութեան վերականգման, երկրորդը փափագում էր in permanent յեղափոխութիւն, ձգտում էր յեղափոխութեան «Երկրորդ էտապին» (Լենին). առաջնի յաջողութիւնը պիտի պսակէր սև բէակցիայի յալլթանակը, երկրորդի յաջողութիւնը պիտի անխուսափելիօրէն առաջ կոչէր քաղաքացիական պատերազմ, ինչպէս այդ նախատեմնում էին Պլեխանովը, մենշևիլիզմի և էս-էր-իզմի լրջմիտ գլուխները: Երկուսն էլ նոյն իսկ իրանց տարբերութեան մէջ, հաւասարապէս կործանարար էին յեղափոխութեան համար. եթէ բէակցիօներների գործը հակայեղափոխական էր ուղղակի իմաստով, ապա բօշեմիների տակարիկը հակայեղափոխութեան զարգացման խոշորագոյն գործօնի գերն էր կատարում, ուրեմն հակայեղափոխական էր անսուղղակի իմաստով: «Հակայեղափոխութիւնը պիտի գայ բօշեմիներից» — Ծերեթելիի

այս խօսքերը կլասիք նշանակութիւն են սպացել հէնց այժմ: ՚ի նարկէ, մանկամիտ աւանտիւրիստների կարծիքով ուռւական յեղափոխութեան խորացման ամենաբարձր աստիճանը և ալիքաւորումների ամենայախուսն թռչիքները հէնց այժմ են, որ կան: Մինչդեռ փաստօրէն ուռւայի գոխութեան ամենաողբերգական էջը. երբէք, նոյն իսկ Կօրնիլովի դէպքի ժամանակ, այնպիսի ահաւոր հեռանկարներ չեն նախազգուել գալիք օրերի սև ֆօնի վրայ, ինչպէս այժմ են՝ բօշեմիկական կօմանդոյով սփուռող քաղաքացիական պատերազմի հրացէկ բոցերի այս սպալից օրերին: Պէտք է պարզապէս զուրկ լինել առողջ մտքից և պատմական տարրական հոտառութիւնից՝ դասաւորւող յարաբերութիւնների ընթացքն ու իմաստը չըմբռնելու համար:

III.

«Հաց, ազատութիւն և խաղաղութիւն...»:

Իրանց խարուսիկ խոստումներից ո՞րը կատարեցին կամ ո՞րը կարող էին խոստացած չափերով կատարել տիրապետութեան հասած բօշեմիկները: Հացի փոխարէն հրամցրին նրանք մասսաներին վառութեան գնդակ. սովոր զարհուրելի չափեր ընդունեց և ծաւալուեց թիկունքից զօրածակատ. պետական մեխանիզմը կազմալուծուած մնաց շարաթիւներ շարունակ, կարևորագոյն ֆունկցիաները գաղարեցին գործելուց. գաւառներում թե առաւ անարխիան, կողոպուան ու հաւարը ու ժեղացան, արիւնահեղ ընդհարումները խրօնիքական դարձան, սեպարատիզմը գլուխ բարձրացնելով անգամահատեց լայնածաւալ պետութիւնը. կենարոնը կորցրեց իր գերիշխանութիւնը ծայրերկրների վրայ. հաղորդակցութեան առանց այն էլ կաղ է կաղ միջոցները խանգարուեցին աւելի մեծ չափով:

Ասացէք խնդրեմ, կարող էին անկոչ ուզուրպատորները իրանց իսկ ձեռքով ստեղծած այդ քաօսային պայմաններում արդարացնել գէթ մինիմումը իրանց հացի վերաբերեալ տուած խոստումների: Ի՞նչ կարող էր անել լենին-Տրոցկու «կառավարութիւնը», երբ նրանցից երեսն թեքել ոչ միայն գեմօկրատիայի բոլոր կարող ու կենդանի ոյժերը, այլև իրանց իսկ երէկուայ գաղափարակիցները՝ այսպէս կոչուած «աջակողմեան» բոլշևիկները: Եթէ ողջ երկրի խանդագառ օվացիաներով իշխանութիւնը ստանձնած ժամանակառ կառավարութիւնը, որ ունէր իր արամադրութեան տակ հասունացած և պատրաստուած ոյժերի հակայական մարմիններ ու ապագարատներ և վայելում էր քաղաքի ու գիւղի աջակցութիւնը, — չկարողացաւ բաւարար չափով կանոնաւորել պարենաւորման գործը, ինչ պիտի անէր բոլորից մեկուսացած լենին-Տրոցկու «կառավարութիւնը» իրանց անաջողակ համհարզներով: Ոչ ֆիզիքական բռնի ոյժով և ոչ էլ հլու հնազանդ դեմագօնների լեզիօններով, — որոնց վրայ բացառապէս հենուում է բոլշևիկների կառավարական տիրապետութիւնը, — անկարելի է պետական-շինարար և ստեղծագործական յամառ աշխատանք վարել և կնճռու հարցեր լուծել: Լենինական «գելրեաները» անսարժէք թղթի կտորներ են միայն, որոնք բացի խոր արգահատանքից, չեն կարող պետական խելք ու փորձառութիւն ունեցող մարդկանցից այլ գնահատութեան արժանանալ:

«Աղասութիւն» — աղմկում էին բոլշևիկները:

Փետրուարեան յեղափոխութիւնը իրականացրեց մեր քաղաքական և քաղաքացիական ազատութիւնների այնպիսի լայն ու արմատական սկզբունքներ, որոնց երկրորդ օրինակը չենք կարող մատնացուցել երկրագնդի վրայ: Թիկունք ու ճակատ, ժողովուրդ և զօրք վայելում էին

քաղաքացիական իրաւահաւասարութեան բոլոր՝ դեռ ոչ մի երկրում նման չափով գրյութիւն չունեցող բարիքներն ու ազատութիւնները: Խօսք կարող է լինել ոչ թէ այն մասին, որ յեղափոխական նուսիայում դեռ բաց ու թերի տեղ կայ՝ ազատութեան լուսածածանչ շողերը սփոելու համար, այլ այն մասին, որ յեղափոխութիւնը և ժամանակաւորը կառավարութիւնը շատ աւելի ընդարձակ չափով, արմատականօրէն և միանգամբց իրականացրին իդէալական ազատութեան սկզբունքները, քան մեր երկրը ընդունակ էր ընդգրիկելու, քան համառուս հասարակութիւնը պատմականօրէն հասունացած էր ըմբռնելու և գնահատելու ձեռք բերուած ազատութիւնների արժէքը: Ինչո՞ւ թագցնենք, երբ երկոյթի պատմական վերլուծութիւնը այդպիսի գնահատութիւն է պահանջում անվերապահօրէն: Խորապէս զգում ու գիտակցում է այժմ ամեն մի դեմօկրատ, որ համառուս ժողովուրդները շատ հեռու եղան գիտակից քաղաքացիութեան վերաբերմունքից գէպի ազատութեան բարիքները. նրանք վերաբերուեցին աւելի շուտ, որպէս «ապատամք ստրուկներ» և ազատութեան վեշերի տակ տարերայնօրէն աճող անարխիան հասաւ կամայականութեան ու սանձարձակութեան ծայր աստիճանին:

Սակայն անպատասխանատու գենագօնների համար գոյութիւն չունի ոչ պատմական ձշմարտութիւնը և ոչ գառն իրականութեան անկապաելի փաստերը: Հրապարակային գենագօնին՝ անգիտակից մասսաների կուրացնան, հրահրման և զրգումների այդ վասթարագոյն գէնքը, ազատութեան հարցում ևս իսկաղաց իր տիրուր ու աւերիչ գերը: «Միթէ մենք Նիկոլայ Ռին գահընկեց ենք արել նրա համար, որպէս զի նրա փոխարէն բազմեցնենք 12 Նիկոլայներ» (իմա ժամանակաւոր կառավարութեան

Ասացէք խնդրեմ, կարող էին անկոչ ուզուրպատորները իրանց իսկ ձեռքով ստեղծած այդ քաօսային պայմաններում արդարացնել գէթ մինիմումը իրանց հացի վերաբերեալ տուած խոստումների: Ի՞նչ կարող էր անել Լենին-Տրոցկու «կառավարութիւնը», երբ նրանցից երես են թեքել ոչ միայն գեմօկրատիայի բոլոր կարող ու կենդանի ոյժերը, այլև իրանց իսկ երէկուայ գաղափարակիցները՝ այսպէս կոչուած «աջակողմեան» բոլշևիկները: Եթէ ողջ երկրի խանդավառ օվացիաներով իշխանութիւնը ստանձնած ժամանակաւոր կառավարութիւնը, որ ոճէր իր արամադրութեան տակ հասունացած և պատրաստուած ոյժերի հոկայական մարմիններ ու ապարատներ և վայելում էր քաղաքի ու գիւղի աջակցութիւնը, — չկարողացաւ բաւարար չափով կանոնաւորել պարենաւորման գործը, ինչ պիտի անէր բոլորից մեկուսացած Լենին-Տրոցկու «կառավարութիւնը» իրանց անաջողակ համհարդինութիւնը: Ոչ ֆիզիքական բռնի ոյժով և ոչ էլ հլու հնագանդ գեմագօգների լեզիոններով, — որոնց վրայ բացառապէս հենւում է բոլշևիկների կառավարական տիրապետութիւնը, — անկարելի է պետական-շինարար և ստեղծագործական յամառ աշխատանք վարել և կնճռու հարցեր լուծել: Լենինական «գելրեաները» անարժէք թղթի կտորներ են միայն, որոնք բացի խոր արգահատանքից, չեն կարող պետական խելք ու փորձառութիւն ունեցող մարդկանցից այլ գնահատութեան արժանանալ:

«Ազատութիւն» — աղմկում էին բոլշևիկները:

Փետրուարեան յեղափոխութիւնը իրականացրեց մեր քաղաքական և քաղաքացիական ազատութիւնների այնպիսի լայն ու արմատական սկզբունքներ, որոնց երկրորդ օրինակը չենք կարող մատնացուցել երկրագնդի վրայ: Թիկունք ու ճակատ, ժողովուրդ և զօրք վայելում էին

քաղաքացիական իրաւահաւաքութեան բոլոր՝ դեռ ոչ մի երկրում նման չափով գոյութիւն չունեցող բարիքներն ու ազատութիւնները: Խօսք կարող է լինել ոչ թէ այն մասին, որ յեղափոխական նուսիայում գեռ բաց ու թերի տեղ կայ՝ ազատութեան լուսածածանչ շողերը սփռելու համար, այլ այն մասին, որ յեղափոխութիւնը և ժամանակաւոր կառավարութիւնը շատ աւելի ընդարձակ չափերով, արմատականօրէն և միանգամից իրականացրին իդէալական ազատութեան սկզբունքները, քան մեր երկիրը ընդունակ էր ընդգրկելու, քան համառուս հասարակութիւնը պատմականօրէն հասունացած էր ըմբռնելու և գնահատելու ձեռք բերուած ազատութիւնների արժէքը: Ինչու թագցնենք, երբ երկոյթի պատմական վերլուծութիւնը այգափսի գնահատութիւն է պահանջում անվերապահօրէն: Խորապէս զգում ու զիտակցում է այժմ ամեն մի գեմօկրատ, որ համառուս ժողովուրդները շատ հեռու եղան զիտակից քաղաքացիութեան վերաբերմունքից զէպի ազատութեան բարիքներո: Նրանք վերաբերուեցին աւելի շուտ, որպէս «ապատամբ սարուկներ» և ազատութեան վեշերի տակ տարերայնօրէն աճող անարիխան հասաւ կամայականութեան ու սանձարձակութեան ծայր աստիճանին:

Սակայն անպատասխանատու գեմագօգների համար գոյութիւն չունի ոչ պատմական ձշմարտութիւնը և ոչ դառն իրականութեան անկապտելի փաստերը: Հրապարակային գեմագօգիան՝ անգիտակից մասսաների կուրացնան, հրահրման և զրգունների այդ վատթարագոյն զէնքը, ազատութեան հարցում ևս՝ խաղաց իր տիրուր ու աւերիչ գերը: «Միթէ մենք Նիկոլայ Ռին գահընկեց ենք արել նրա համար, որպէս զի նրա փոխարէն բազմեցնենք 12 Նիկոլայներ» (իման ժամանակաւոր կառավարութեան

անդամները), «Правда»-ի էջերում բնաբանի ձևով շաբառ-նակ հնչւող այս ստայօդ խօսքերը մասսակ էր դարձել ամեն մի բօլեվիկի բերնում, մոռանալով միանգամայն, որ ոչ այսք, բայց եթէ իրանց հոգեսր պապը՝ Վլադիմիր Լենինը, իր վերապարձած օրն իսկ Ֆինլանդական կայա-րանում բարձր կոչել է խուռն բազմութեան ուղղած իր ձառի մէջ, որ «Մուսաստանը ամենաազատ երկիրն է աշ-խարհի երեսին»: Խնչումն էին նեղուս բօլեվիկիները, երբ նրանք աւելի, քան ուրիշ կազմակերպութիւններ ու կու-սակցութիւններ ազատորէն ողոգում էին իրանց թերթե-րով ու կոչերով թիկունքն ու ճակատը և գեռ իրանք էին կաշկանդում ուրիշ օրգանների ազատ տարածումը ֆրոն-տում: Խնչումն է կայանում «բօնապարտիզմը» Փամանա-կաւոր կառավարութեան, որի միայն ծայրանեղ թուլու-թեան և անուժութեան մասին կարող էր խօսք լինել և ոչ խստութիւնների: Թէ բօլեվիկիների համար ցանկալի էր, որ իրանք արտօնուած լինէին ոչ միայն խօսքի . լիտա-տար ազատութիւն, այլ և գործի անսահմանափակ սան-ձարձակութիւն վայելելու և արիւնանեղ սկանդալի, ոճրա-գործ ապստամբութեան գէպքում (իմայ յուլիսեան գէպ-քերը Պետրօգրադում) գործի տխուր ասպետներին բանտ դնելու և դրանով անվաս դարձնելու փոխարէն, հերո-սացնուէին հրապարակով:

Պատենտաւոր գեմազօղիան չի ճանաչում և ընդու-նում քննական հարց ու պատասխանը. նրա միսիան թոյլ երակների վրա խաղալու, մութ բնազգներ գրգռելու և կլանիչ ախորժակներ յուգելու մէջ է կայանում: Իրանց յետին նպատակների համար բօլեվիկիները կարիք ունէին մասսաների գինակցութեանը, ուստի ոչ մի գեմազօղիա-կան միջոցի առաջ կանգ չէին առնում— «նպատակը ար-դարացնում է միջոցները»— ուժեղացնելու համար տրբ-

տունջն ու բողոքը հասարակական խաւերի մէջ, մի կողմից թունաւորելով նրանց արամազըռութիւնը կատարուած յե-ղափոխութիւնը «թերութիւնների» գէմ, միւս կողմից խոստանալով նրանց աւելի իդէալական ու բովանդակալից յեղափոխութիւն:

Եւ եկաւ բօլեվիկիների աւելի մեծ ազատութիւն խոստացող «յեղափոխութիւնը»:

Թւում է, թէ չպիտի չափազանցնենք, եթէ մի փոք-րիկ հոգեբանական թոփչք գործենք ընթերցողի ներքին աշխարհը: Ազատութեան գաղափարի և բօլեվիկական ապստամբութիւն (ներողութիւն՝ «յեղափոխութիւն») փաստի համադրութիւնը կարող է ամենայն իրաւացիու-թրամք յուղել ընթերցողի մէջ մի սրբազան զարոյթ:

Ազատութիւն և բօլեվիկական տիրապետութիւն...

Համակերպելի են այդ մէկը միւսին արմատականօ-րէն բնաջնջող գաղափարներն ու գրութիւնները:

Լենին-Տրոցկու «կառավարութիւնը» թքեց ազատու-թեան գաղափարի Եւ թեօրիայի եւ պրակտիկայի վրայ: Նո խաչ հանեց և ոտի տակ տրորեց վետրուարեան յե-ղափոխութեաննուածած բոլոր ազատութիւնները: Յարի կա-ռավարութեան (սպիտակ տերրորից) ազատագրուած և ութ ամիս ազատ շունչ քաշող միտքն ու գրիչը աւելի մեծ կամայականութեամբ ենթարկուեցին «կարմիր տերրօրին»: «Մամուլի ազատութիւնը մանր բուրժուական պահանջ է», — ահա այս խօսքերով աշխատում էր ուզուբապատօնների շէֆը «արդարացնել» մամուլի ազատութիւնը վերացնող իր ոճրագործ առաջարկը: Բակունինի հարազատ յաջորդը հանդիսացած Լենինը մի աւելորդ ապացոյցով խզեց իր կապերը մարքարանական գեմուկրատիզմից: Փակման սպաս-նալիք կարդալ մամուլի բոլոր օրգանների գէմ, բացի բօլեվիկականից, դա նոյնը կլինէր, եթէ նախկին բիւրօ-

կրատական կառավարութիւնը փակէր բոլոր մերեալ-առաջադէմ թերթերը, բացի բէակցիօնէր սև-հարիւրակային օրգաններից, ոկտած «Новое Время»-ից դէպի էլ աւելի աջ («Русское Знамя», «Землица» և այլն): Խոսքի ու մասուլի դէմ ուղղած այն ճնշումներն ու հալածանքները, ինչ չէր յանդզնել անել Նիկոլայ II-ի ոճրադորձ կառավարութիւնը, արեց Վլադիմիր Լենինի նոյնքան ոճրադորձ կառավարութիւնը: Խոսական անարխիզմը միքայլ էլ հեռու անցաւ ոռուսական ցարիզմից իր աղատասպան քաղաքականութեան մէջ:

Իսկ բօլեվիկ բռնականների անթիւ ձերբակալութիւններն ու հալածանքները իրանց քաղաքական հակառակորդների՝ զբանց մէջ բազմաթիւ գեմօկրատների և ոօցալիստների դէմ: Ի՞նչ ֆոկուսութեամբ են արդարացնում ոռուսական «նոր ժանդարմները» («Дѣло Народа») իրանց զազրելի արարքը: Թողլ էին տուել իրանց հին ժանդարմները բրածեծի և վիրաւորանքի այն անլուր ստոր միջոցներին զիմերու քաղաքական բանստարկեալների դէմ, ինչպէս վարուեցին Լենինական «կարմիր թիկնապահները» ժամանակաւոր կառավարութեան անդամների հետ (յիշեցէք սօցիալիստ մինիստր Գվոզդեվի պատմածները): Իսկ Պլեխանովի բնակարանի եռակի խուզարկութիւնը: Պլեվէի և Ստոլբինի կառավարութիւնները չյանդզնեցին կամ չկամեցան Լեվ Տոլստոյին որևէ է կերպ անհանգստացնել. բիւրօկրատիայի և ուղղափառութեան դէմ ծառացած ըմբռուտ ծերունին մնաց մինչև իր կեանքի վերջը անձեռնմիւթիւնի: Եւ տեսէք սուս իրականութեան դառն իրօնիան: Այն հովանաւորութիւնը, որ վայելեց սուս երկրի մեծ զրոյը Նիկոլայ II ինքնակալի կառավարութեան օրով, չունեցաւ սուս պրօկետարիատի մեծ ուսուցիչը «սօցիալիստ» Վլադիմիր Լենինի այսպէս կոչուած «բանտորա-



գիւղացիական կառավարութեան» օրով: Եւ գիտէք ովքեր են անհանգստացըրել հիւանդ ծերունուն՝ ոռուսական յեղափոխութեան այդ խոշորագոյն ուահվիրանին. դարձեալ «կարմիր թիկնապահները», նրանք, որոնք հոչակուած են, որպէս «краса и гордость русской революции» (Տրօցկի): Պլեխանովի օրգան «Единство»-ն մերկացնում է բօլշեվիկների անյատակ ցինիզմը, որոնք աշխատում են յետին հաշով արդարացնել խուզարկուներին, պատճառաբանելով, որ նրանք, իւր թէ, չեն իմացել Պլեխանովի ով լինելը: «Զէ որ—զըում է «Единство»-ն—կարմիր թիկնապահների շարքերում մտել են զիտակից բօլեվիկի բանւորների լաւագոյն ներկայացուցիչները: Եւ տեսէք, նրանք անգամ զաղափար չեն ունեցել Պլեխանովի մասին՝ ոռուսական սօցիալգեմօկրատիայի ստեղծողի, նրա հին պարագլիսի մասին, որի անունը յայտնի է Խոսիխայի և Եւրոպայի իւրաքանչիւր կիսագիտակից բանւորին: Կարմիր թիկնապահները՝ կողմաբար վիրաւորելով Պլեխանովին, պէտք է որ իրանց հոգում խորապէս համոզուած լինէին, որ նրանք «սօցիալական յեղափոխութիւն» են կատարում, նրանք բռնել են իսկական «բուրժուալին», «Կօրնիլովցին» ըստ Լենինի բեցեպտի: Եւ զրա համար պատասխանատու են ոչ թէ նրանք, այլ գուք, պ. Լենին: Այդ գուք էք, ձեր հոգին է անմիջապէս ներկայ գտնուել Պլեխանովի դէմ գործած բռնութեան ժամանակ: Այդ գարշելիութիւնը գուք էք կատարել նրա դէմ» (№ 180):

Սակայն բօլեվիկական բռնապետութեան նոր կուրսը արտայայտուեց ոչ միայն խօսքի ու անձի ազատութեան զաղափարի ոտնահարման մէջ. նրանք չխորշեցին նոյն իսկ հասարակական պատկառելի հաստատութիւնների հեղինակութեան առաջ. նրանք որևէ դարձրին իրանց բռնի կամայականութեան Պետրօգրադի քաղաքային

գումաները։ Պատմական նման փաստերի տխուր զուգացիպութեամբ բօլեվիկական քաղաքականութիւնը նորից յիշեցրեց բիւրօկրատական յաղթանակող բէակցիայի ու էջերը անցեալում, երբ ցարի պատրասիները թքելով համառուս ազգաբնակութեան ընտրական կամքի վրայ, լուծեցին առաջին և երկրորդ Պետական Դումաները՝ նոր խուլիգանական կազմ ունեցող Դումա հրաւիրելու համար։ Անին-Տրօցկու կառավարութիւնը աւելի կոպտաբար ու վիրաւորանքսվ լուծելով մայրաքաղաքների գումաները, թքեց գեմօկրատական քախանդամ սիստեմով արտայայտուած ժողովրդական կամքի վրայ, որպէս զի հրէշային ահարեկումներով կեանքի կոչէ բօլեվիկական հլու հնագանդ գործիքներ նոր «ընտրութիւններով»։

Այդ բանի ակտը կազմում է բօլեվիգմի երկինք աղազակող սիրագործութիւններից մէկը։ Անպատիժ և անառիթ, Փիդիքական ոյժի գործադրութեամբ լուծել այսպիսի հաւաքական մարմիններ, որոնք ընտրուած են Մեծ Յեղափոխութեան դեմօկրատական ամենախոշոր նուաճումներից մէկի հիմքերով (քառանդամ սիստեմով) եւ որոնց մէջ յեղափոխական դեմօկրատիայիներկայացուցչութիւնը կազմում է $80^{\circ}/o$ -ից աւելի ճնշող սեծամտանութիւն։

Ահա ինչ հարուածներ է ապրում անարատ անցեալ ունեցող յեղափոխութեան այժմեան վիճակը։ Ահա ինչ փաստերով պատռուեց մոլորաւած մասսաներին «ազատութիւն» խոստացող բօլեվիկների կեզծ դիմակը։

IV.

«Խաղաղութիւն», «թող կորչէ պատերազմը», — զուում էին բօլեվիկները յեղափոխութեան առաջին օրերից ի վեր և հաւատացնել աշխատում մասսաներին, որ մի-

այն իրանք են խաղաղութեան կողմանակիցները և միայն իրանց քաղաքականութեամբ առաջնորդւող «խորհուրների կառավարութիւնը» կարող է շուտափոյթ խաղաղութիւն կնքել։

Մենք այս տեսութեան մէջ մի կողմ ենք թողնում բօլեվիգմի «թէօրետիկների» պատմահայեցողական «տեսակէտը» համաշխարհային պատերազմի ծագման պատճառների և նրա հասարակական տեսդեմների բնոյթի մասին։ Դա տեսական արակտատ պահանջող մի հարցէ*), որ մեզ շտահ նեռուն կտանէր ներկայ կապակցութեան մէջ, ուր մենք գործ ունենք բացառապէս բօլեվիկների գործնական քաղաքականութեան ընթացքի հետ։ Վերջին կէտում ևս մենք որոշ սահմանափակումներ պիտի անենք. քննութեան առարկայ պիտի գործնենք ոչթէ նրանց տակտիկական գիրքը գէպի պատերազմը, այլ գէպի պատերազմը միև վերջ տարու եւ հասագութիւն կիմնելու հարցը, որպէս զի կարողանանք անմիջապէս պարզել բօլեվիկական լոգունդի — «խաղաղութիւն», «թող կորչէ պատերազմ» — իմաստը։

*) Նա, ով ուզում է փաստացի գաղափար կազմել արդի պատերազմի պատրաստութեան գործոնների և ծագման պատճառների մասին, թող նեղութիւն կրէ կարդալու մեր վերջն ընդարձակ աշխատութիւնը՝ „Բազմաթիւ մուլտարիզմ և իմպերալիզմ Եւ Գերմանիա“ վերագրով։ Մինչև այժմ չ'համարձակուեց ոչ մի ցիմմերվալտիսա կամ բօլեվիկ փաստական որևէ տապակութիւններ անել մեր հիմնաւորած թեզինների դէմ, թէկ գրախօսականներ եղել են ցիմմերվալդիս և կիսարօլեվիկ հրապարակախոնների կողմից (նրանց „Նորա Ժիշն“ օրգանում և „Լետոնիս“ ժուրնալում); Իրանց անհամաձայնութիւնն իմ հիմնական տեսակէտի հետ արտայայտում են սոսկ շարլոն ֆրազներով, բայց սահպուած են խոսավանել մեր արգումենտների փաստական ոյժն ու ճոխութիւնը, մինչ այն աստիճան, որ պաշտպանութեան մի խօսք անզամ չեն գտնում յօդուա իրանց գաղափարակից նիկ. Սուխանովի, որի գրքոյլը („Պочему мы воюем“) անողոք քընադատութեան ենք ենթարկել մեր աշխատութեան մէջ։

Յեղափոխութեան առաջին օրերից՝ ի վեր ոռւսական դեմօկրատիան յայտարարեց մի շատ առողջ և խելացի տեսակէտ խաղաղութեան հարցի նկատմամբ.—մենք միայն գերմանական ժողովրդի հետ կարող ենք հաշտութիւն կնքել. մենք կմեկնենք մեր ձեռքը գերմանական կառավարութեան գլխի վրայից և կսեղմենք թիկունքում նոյնպիսի յեղաշրջում առաջ բերող դեմօկրատիայի եղբայրական ձեռքը:

Թող, որ այդ տեսակէտի իրականացման փաստական հնարաւորութիւնը կախուած լինի օբխեկտիւ պայմաններից և դժուարութիւններից, փոյթ չէ. ինքը տեսակէտը, այսուամենայնիւ, գաղափարային յստակ գիտակցութիւնն է արտայայտում հպարտ յեղափոխականի:

Սակայն բօլեվիկական թեր, որ սովորուած ու յափշտակութեամբ կրկնում էր շարունակ այդ աեսակէտը, իր ակնկալութիւնների մէջ հասաւ այնպիսի չափազանցութիւնների և իր «խաղաղատենչ» ձգտումների մեջ դիմեց այնպիսի աղաղակիչ հակասութիւնների, որ ակնարկածս տեսակէտը միանգամայն աղճատուեց՝ քանի բօլեվիդմը օպօզիցիայի մէջ էր, իսկ այժմ էլ ցեխի մէջ տրուրուեց՝ տիրապետութեան հասած բօլշևիկիերի կողմից:

Պարզենք մեր միտքը, յիշելով փաստեր բօլեվիկական քաղաքականութեան աննախանձելի էջերից:

Ով յեղափոխութեան ժամանակ և նրա առաջին մեղրային շաբաթներին ու ամիսներին եղել է Պետրօգրադում, նկատած կլինի անշուշտ, թէ ինչպիսի ջղածութեամբ լարուած սպասում էր դեմօկրատիան, որ ոռւսական յեղափոխութիւնը կդանէ իր ուժեղ արձագանքը արևմուտքում, ՚ի հարկէ ամենից առաջ իր քաղաքական կառուցուածքով յեղափոխութեան այնքան մեծ կարիք ունեցող Գերմանիայում: Օրս ՚ի բուն բօլեվիկական

«Պրավда»-ն աշխատում էր անհիմն ենթադրութիւններով և էժան մխիթարութիւններով աւետել իր ընթերցող մասսաներին, որ ահա Գերմանիան յեղափոխութեան նախօրեակին է կանգնած: Ամեն մի գործադուլ գերմանական այս կամ այն քաղաքում, ամեն մի խլրտում ու յուզմունք պարենաւորման հողի վրայ, որոնք անպակաս են եղել պատերազմի ընթացքում նաև ոռւսական յեղափոխութիւնից առաջ, բօլշևիկական օրգանը ուղեցնում էր այդ դէպքերը, խոշորացոյցի տակ դնում և գերմանական յեղափոխութեան վերահաս գալուստը յայտարարում տօնական բացականչութիւններով: Նա, ով ծանօթ է գերմանական յարաբերութիւններին և ճանաչում է գերման ժողովրդին, միայն հեգնական ժամանակի կարող էր դիմաւորել՝ բօլշևիկի «քաղաքագէտների» մանկամիտ մարգարէութիւններին: Քանի քանի անգամ ենք վիճել այդ հարցի շուրջը հայ բօլշևիկների հետ, որոնց իրազեկութիւնը «Պրավда»-ի էջերից հեռուն չի անցնում և որոնք մտաւոր անօրինակ ստրկութեամբ հալած իւղի տեղ են ընդունում լինինական ամեն մի ըեցեպալը:

Ոռւսական ակնկալութիւնների վրայ սառը ջուը ածեց գերմանական սօցիալգեմօկրատիան (տիրող թեր), որի ներկայացուցիչը՝ պատգամաւոր նոսկէն, հանդիսաւորապէս յայտարարեց բայխստագում գեռ մարտին (սուսական դեմօկրատիայի առաջին մանիֆեստը, մարտի 14-ին, լոյս ընծայելուց յետոյ), որ իրանք կարիք չունին արտասահմանեան ընկերների խորհուրդներին, որովհետեւ «յեղափոխութիւնը գերմանական բանւորութեան համար կլինէր ամենամեծ դժբաղդութիւնը»: Դա մի անուղղակի պատասխան էր ոռւսական դեմօկրատիայի կոչին՝ «Ողջ աշխարհի աշխատաւոր ժողովրդի» հասցէին ուղղուած: Այսուհետեւ կուսակցութեան լիդերները՝ Շէյդեման, էղ-

Դաւիթ, Զիւգեկում, Հայնէ բայխստագում, դոկտ. Աենչ
մամուլի մէջ բարձրաձայն առաջարկում էին պետական
կանցլերին, որ սա շատապէ բէֆօրմներ տալ Պրուսիայի
ներքին քաղաքական կեանքի համար, որպէս զի գրանով
կանխէ ամեն մի յեղափոխական բռնկման: Անա այսպէս
էր մտածում գերմանական դեմօկրատիայի ճնշող մէծա-
մասնութիւնը յեղափոխութեան մասին:

Բայց բոլշեվիկական գիրքի հանդէպ մեղ շարունակ
զբաղեցնում էր մի հարց. արգեօք, այդ պարոնների ան-
կեղծ ցանկութիւնն էր՝ տեսնել յեղափոխութեան սրբա-
զան բոցի բռնկումը նաև Գերմանիայում, թէ դա թի-
կունքում և ճակատում մասսաներ մոլորեցնելու և քնաց-
նելու մի խորաւանկ մանեօվր էր՝ իրանք էլ չհաւատալով
իրանց խօսքերին:

Խոստովանում ենք, ընթերցնող, որ մենք հրաժարուե-
ցինք այդ քննական հարցի պատասխանը որոնելու ու զանել
հոգեբանական վերլուծութեամբ, դա անապահով և անհա-
մոզեցուցիչ մի մեթօդ է՝ կուսակցութիւնների Փիզիօնո-
միաները ճանաչելու համար: Մեր հարցի բաւարարութիւ-
նը աշխատեցինք զանել բոլշեվիկների քաղաքականութեան
զիկ-զակ վերելիքների մէջ, նրանց բռնած գիրքի աղաղա-
կիչ անհետեղականութեան և քաօսային հակասութիւն-
ների մէջ:

Յեղափոխութեան համարաւորութիւը Գերմանիայում
մենք միշտ շաղկապել ենք արդի պատերազի լինրացի
և եղի նետ: Դեռ կի՞ ըէժիմի օրով լոյս տեսած մեր յօ-
դուածների մէջ բազմիցս շեշտել ենք այն միտքը, որ
յաջող ու արմատական յեղափոխութիւն Գերմանիայում
հնարաւոր է միայն նրա պարտութեան դէպքում պատե-
րազմի դաշտում: Ռուսական յեղափոխութեան գալուստը
աւելի գիւրին էր պատկերանում մեղ, որովհետեւ գեռ պա-

տերազմի նախօրեակին, 1913—1914 թ., օպօզիցիօն
Ռուսիայում կուտակուել էր այն յեղափոխական էներգիան,
ինչ եղել էր տասր տարի տուաջ՝ 1904 թ.: առաջին յեղա-
փոխութեան նախօրեակին: Պատերազմի ընթացքում յե-
ղափոխական տոգորումները մեր երկրում ոչ միայն շմա-
րեցին, այլ և աւելի ուժեղացան չնորհիւ ներքին քայլա-
յունների և արտաքին անաջողութեան, չնորհիւ բիւրօկրա-
տիայի բութ յամառութիւնն ուռւ հասարակականութեան
հասունացած պահանջների հանդէպ և, որ պակաս նշանա-
կութիւն չունի, չնորհիւ պալատական կամարիլլայի մէջ
բուն դրած հայրենադաւ և հայրենավաճառ ակնյալտնի
գերմանասիրութեան, որին պիտի յայսնի չափերով վերագ-
րել ուռսական զօրաճակատի անաջողութիւնները:

Ի նկատի ունենալով այդ բոլոր հանգամանքները,
մենք խորապէս հաւատացած էինք, որ ոռւսական յեղա-
փոխութիւն վաղ թէ ուշ՝ պատերազմի ընթացքում թէ
յետոյ, պիտի անխուսափելիօրէն բռնկուէր, եթէ նոյն իսկ
պատերազմական այնքան մեծ անաջողութիւններ չունե-
նար Ռուսիան և եթէ, աւելի կասենք, դաշնակիցների հետ
միասին եւ դաշնակիցների շնորհիւ վերջին հաշւով յաղ-
թութեամբ գուրս գար նա այս պատերազմից: Մեր այդ
հաւատը ունէր նետեեալ փաստական հիմքերը:

Նախ հակագերմանական կօլիցիայի յաղթութիւնը
ոչ մի դէպքում չէր կարող օրիորդ պսակել ոուսական
բէակցիայի զլուխը և նրա զոյութեան ամուր հենարաններ
չնորհել, որովհետև մի պատերազմ, որի մէջ ամենավճռա-
կան գործօնների նշանակութիւն ունեն տեխնիկան և ֆի-
նանսական ոյժը, ապա ուրեմն նրա յաղթութեան պսակ-
ները չին կարող ոչ մի դէպքում հիւսուել արևելեան (ոու-
սական), այլ բացառապէս արևմտեան (անգլօ-ֆրանսիա-
կան) ճակատում:

Երկրորդ՝ գերմանական կօալիցիայի պարտութիւնը կամ յաղթութիւնը միայն և միմիայն կախուած էր Գերմանիայից՝ միլիտարիզմի այդ «եզակի» հերոսից։ Գերմանական կօալիցիայի պարտութիւնը պատերազմի դաշտում ամենից առաջ և ամենամեծ չափով կնշանակէր պարտութիւն պաշտօնական Գերմանիայի քաքաքական կուրսի երկրի ներսում, կնշանակէր անկումն Վիլհելմ II-ի անձնական բէժիսի գիւթող պրեստիժի, կնշանակէր պարտութիւն պրուս-իւնկերական հաստաբազուկ կաստայի, միլիտարիստների և իմպերիալիստների տիրող բանակի՝ իրանց ուժեղ ու համատարած կազմակերպութիւններով («Wehrverein», «Flottenverein», Alldeutscher Verband» և այլն)։ Իսկ պարտուած Գերմանիայում բոնկուած յեղափոխութիւնը կ'գտնէր իր ամենաուժեղ արձագանքը Ռուսիայութիւնը կ'գտնէր իր ամենաուժեղ արձագանքը Ռուսիայում, ուր արդէն պարարտ հող կար գրա համար։ Գերմանական կայզերիզմի անկումից յետոյ այլևս գոյութեան տեղ ու իրաւունք չէր ունենայ ոռուսական ցարիզմը, որովհետեւ վերջինս բէակցիան էր անւում և պայմանաւորուած էր առաջնով և ոչ հակառակը։ Դա տարբական ձշմարտութիւն է։ Նոյնքան տարբական է և ան, որ տնտեսապէս և պատմա-կուլտուրապէս աւելի բարձր կանգնած երկրի յեղաշրջումն է, որ վերջին հաշով ուժեղ արձագանք է գտնում աւելի երիտասարդ և յետամենաց երկրների մէջ, բայց ոչ հակառակը։ Այն նշանակութիւնը, որ կունենար կապիտալիզմի նորագոյն դասական որրանի՝ Գերմանիայի՝ յեղափոխութիւնը Եւրոպայում և մասնաւորապէս Ռուսիայի համար, երբէք չի կարող ունենալ և չունեցաւ ազբարային-նահապետական երկրի՝ Ռուսիայի՝ յեղափոխութիւնը Գերմանիայի համար։ Այդ տեսակէտից չարաշար սխալուեցին իրանց «պատանեկական ոգևորու-

թիւններով» («Рабочая Газета») ոռուսական գեմօկրատիայից շատ ներկայացուցիչներ։

Երրորդ՝ գերմանական կօալիցիայի յաղթական «փառքը», ընդհակառակը, պիտի ունենար, ինչպէս և դժբաղտաբար ունեցաւ, միանգամայն հակառակ հետևանքները։ յաղթութիւնը պիտի օրիոլով պսակէր Վիլհելմի կառավարութեան գլուխը, անհնար գարձնէր ներքին ընդդիմագիր շարժման ուժեղացումը, փակէր գեմօկրատիայի բերանը, զերմանական ոյժի անպարտելիութեան ներբողներով արքեցնէր քաղքենիութեան լայն խաւերը, անպատիժ կապէր ըմբոստ տիպերի ձեռքն ու ոտքը (իմա Կարլ Լիբկնեխտ) և ստիպէր գեմօկրատիայի ներկայացուցիչներին անվերապահ յայտարարելու, որ «յեղափոխութիւնը գերմանական բանուրութիւն համար գժբախտութիւն կլինէր» (Նոսկէ)։ Ի զուր չէ, որ գերմանական գեմօկրատիայի այնպիսի կարկառուն գէմքեր, ինչպէս Կարլ Կառուցկին և էդուարդ Բերնշտայն է, որոնք պատերազմի հարցում համերաշխ գիրք էին բռնել, դառնութեամբ խոստովանել են, որ ներկայ պայմաններում, քանի պատերազմական բաղդր ժպտում է Գերմանիային, անհնարին է յեղափոխութիւնը Գերմանիայում*):

*) Վերջերս մի այլ իրազեկ աղբիւր հաստատումէ նոյն հնաթաղբութիւնը։ Զեխ սօցիալիստական թերթի խմբագիր ի. Մարտինները տեսակցութիւնն է ունեցել Ստոգհօլմում գերմանական և աստրիական սօցիալիզմօկրատական կուսակցութիւնների կենտրոնական օրգանների («Vorwärts» և «Arbeiter Zeitung») աշխատակցի հետ։ Օտոս Պոլ անունով—մէկը կուսակցական հին հործիչներից, —և հարցը է նրա կարծիքը, թէ որքան հնարաւոր է սպասել յեղափոխութիւնը Գերմանիայում և Աւստրիայում, աւելացնելով, որ Ռուսիայում տարածուած է գրական կարծիք այդպիսի հնարաւորութեան մասին։ Օտոս Պոլը ժպտալով ոռուսական միամտութեան վրայ, վճռականապէս բացասական կարծիք է յայտնել նրա տուած հարցին։ Խնդն՝ չիս սօցիալիստը, իր հերթին զգուշացնելով ոռուս գեմօկրատաներին այդ առիթով, աւելացնում է, որ

Յեղափոխութիւն հնարաւոր է Գերմանիայում ոչ որպէս արձագանք ոռուսական յեղափոխութեան, այլ այն ժամանակ, եթէ նա պարտուի մեր դաշնակիցներից այս պատերազմի ընթացքում։ Հակառակ դէպքում միայն պալիատիւ ըէֆօրմներ կարող են լինել Պրուսիայում և Գերմանիայում։ Այս է մեր ենթադրութիւնը։

Բայց տեսէք, թէ ինչ ապշեցուցիչ հակասութիւննեների բովով ընթացաւ բօլշեվիկների տակտիկը ոռուս-գերմանական յարաբերութիւնների հարցի շուրջը յեղափոխութիւնից առաջ և յետոյ։ Սրար աշխարհին յայտնի է, որ բօլշեվիկները յեղափոխութիւնից առաջ արտայայտուած «պարտուականներ» («ոօրայենէմ») էին, այսինքն ցանկանում էին ցարական Ռուսիայի պարտութիւնը այս պատերազմում, պատճառաբանելով, որ ոռուսական յեղափոխութեան բռնկումը, առել է՝ ցարական միավետութեան տապալումը, հնարաւոր է միայն նրա պատերազմական պարտութեան դէպքում։

Տանք մի բովէ այդ տեսակէտին, առանց վերապահումների, պատմական ճշմարտութեան իր յատուկ բաժինը։ Սակայն եթէ բօլշեվիկների տեսակէտը՝ պատերազմի և յեղափոխութեան փոխառնչութեան նկատմամբ, պատմական մի հանրանիշ համոզմունք է և ոչ թէ չափած ու ձեած է միմիայն ոռուսական յարաբերութիւնների համար, ապա մեզ ստատանջում է այն հարցը, թէ ինչնու նրանք չպահպանեցին իրանց տեսակէտային հետևողականութիւնը գերմանական յարաբերութիւնների նկատմամբ։ Եթէ նրանք առաջ ցանկացել են ցարական Ռուսիայի պար-

եթէ քաղաքական ցնցումներ լինեն Աւստրիայում, ապա դա ոչ թէ կինք տեղական զերման պրօլետարիատի յեղափոխութիւն ընդդէմ ժիավետաթեան, այլ մանր ժողովուրդների ապատամբութիւն ընդդէմ Հաբսբուրգիան բէակցիայի ճնշումների (տես նրա յօդուածը «Եдинություն» № 186)։

տութիւնը՝ ՚ի հարկէ միայն կայզերական Գերմանիայի յաղթութեան հետևանքով, ինչնու նրանք յեղափոխութիւնից յետոյ չցանկացան կայզերական Գերմանիայի պարտութիւնը հանրապետական և դեմօկրատիկ Ռուսիայի և սրա ազատ ու դեմօկրատիկ դաշնակիցների յաղթութեան գնով, որպէս զի պարտուած Գերմանիայում և բռնկուէր յեղափոխութեան այն նուրիբական բոցը, որը բռնկուել ու կործանել էր միապետութեան կոթողները պարտուած Ռուսիայում։ Եւրոպական բէակցիայի երգուեալ թշնամին և համաշխարհային դեմօկրատիայի շահերի տեսակէտից ենող անկաշառ յեղափոխականը պէտք է անհրաժեշտորէն պահպանէր տեսակէտային այդ անշեղ հետևողականութիւնը՝ թէ ցարական Ռուսիայի և թէ կայզերական Գերմանիայի նկատմամբ հաւասարապէս։

Բայց բօլշեվիկները այդպէս չ'վարուեցին, նրանք փոխեցին իրանց Փրօնարք, ՚ի հարկէ ոչ յօդուտ յեղափոխական Ռուսիայի և ոչ ՚ի մատ բէակցիօն Գերմանիայի, այլ բռնկցին մի այնպիսի գերք, որից վերջին հաշով դարձեալ պիտի օգտուէր հակառակորդի իմպերիալիզմը։ Եթէ նրանք առաջ «պարտողականներ» էին՝ միապետական Ռուսիայի հանդէպ, ապա յետոյ դարձան «հակապաշտանողականներ» («անտիօքորոնի») դեմօկրատական Ռուսիայի հանդէպ։ Լսում էք, ընթերցողները կենինականները ամենաազատ և ամենազեմօկրատ երկրի արտաքուստ մահացիորէն վտանգուած շահերի հանդէպ նոյն իսկ արհամարհեցին «պաշտպանողական» («օօրոնական») տեսակէտը, թէ կուզ արտաքին թշնամին՝ նոյնքան բէակցիօնէր ու միավետական, որքան ընկած ոռուսական բէժիմը, առիւծի բաժիններ էր գրաւել երկրից, պինդ նստել էր համեղ կտորների վրայ և սպանում էր հարուածել յեղափոխական մայրաքաղաքին։ Պաշտպանողական տեսակէտը

համարւում է բօլշեվիկների աչքում «հակախնտերնացիօնալիստական» և որպէս զի փրկէին նրանք ցիմմերվալդեան «ինտերնացիօնալիզմի» կասկածառարակ Փօրմուլը, պէտք է նրանք նոյն իսկ մի քայլ էլ հեռու գնային, վերջին հաշւով դարձեալ յօդուտ Գերմանիայի:

Եւ իրաւ, բօլշեվիկները քափ ու քրթինքի մէջ գործի դիմեցին այդ ուղղութեամբ:

Նրանք ոչ միայն հակառակ էին, որ յեղափոխական զօրքը առաջ խոյանայ միապետական զօրքի դէմ և մաքրէ իր արդէն ապատ երկրի սահմանները, այլև, ով զարմանք, բուռն եռանդով ազիտացիա մղեցին յօդուտ «եղբայրացման» գաղափարի ռազմաճակատում: Ռուս զօրքը չպէտք է կոռւի Գերմանիայի դէմ, այլ իր բոլոր մասերում պիտի «եղբայրացման» փորձերի դիմէ հակառակորդի հետ: «Եղբայրացումը» սեպուեց, որպէս խաղաղութեան հասնելու ապահով միջոցներից մէկը:

Իսչպէս կարելի է առաջխաղացման և յաղթութեան կոչ անել, դրա մէջ միայն իմպերիալիստներն են շահագոգուած*):

*.) Իրանց այդ վերջին առարկութեան մէջ ցիմմերվալդիստ բօլշեվիկները միայն այն ժամանակ կունենային իրանց ձևական արդարացումը, եթէ պատերազմի սկզբում նրանք միակողմանի դիրք չընէին առնասարակ դէպի կուոզ երկրները: Իրբեցիմմերվալդիսմի «դօգմայի» ներկայացուցիչներ, նրանք չպէտք է «պարտողական» անսակէտ պաշտպանէին ընդդէմ հին Ռուսիայի, որովհեակ եթէ մի հոսանք պաշտպանում է մի երկրի պարտուելու ցանկալիութիւնը, ապա նա դրանով, կամայ ակամայ, անուղղակի կերպով, պաշտպանում է միւս (հակառակորդ) երկրի յաղթութեան ցանկալիութիւնը. առանց վերջնի յաղթութեան, չկայ և չի կարող լինել առաջնի պարտութիւնը, գա պարզ է առանց այլայլի: Հարց է ծագում. ինչու իմպերիալիստական է համարւում յեղափոխական զօրքին ուղղած յաղթական կոչը՝ ընդդէմ ընկացիօն երկրի միապետական զօրքի, և իմպերիալիստական չի համարւում (ընդհակառակը յեղափոխական է հոչակում) մի բէակցիօն երկրի (նախկին Ռուսիայի) պարտութիւն՝ միւս բէակցիօն

Այդպէս էր բարբառում Լենինի յայտնի ըեցեպտներից մէկը, որ ստրկական հաղանգութեամբ թութակեցին նրա գաւառական բոլոր հլու աշակերաները:

Վիկտոր Զելնովը կատարեալ իրաւացիութեամբ մի սրամիտ նկատողութիւն է արել Լենինի այդ ըեցեպտի վերաբերմամբ: Յունիսի սկզբներին, Բան, և Զին. պատգամ. խորհուրդների համառուսական համագումարի ժամանակ (Պետրօգրագում) Զելնովը իր ճառի մէջ ասել է՝ ՚ի միջի այլոց հետեւեալը. Լենինը մի կողմից հրաժարւում է Շայդեմանի և ընկ. հետ խաղաղութեան բանակցութիւններ վարելուց (խօսքը վերաբերում է սօցիխատական կօնֆերենցիային), իսկ միւս կողմից յանձնարարում է ոռու զօրքերին «եղբայրանալ» ճակատում գերմանական զօրքի հետ, մոռանալով կամ անզիտանալով, որ գերման զօրքի մի մասը Շայդեմանի կողմանակիցներն են (բանւորներից բաղկացած), իսկ աւելի մեծ մասը սարկօրէն ենթարկուած է աակտուին վիլհելմ II-ի հրամաններին:

Շատ ճիշտ նկատողութիւն: Բայց այժմ այնքան է խորացել բօլշեվիկների երկդիմի քաղաքականութեան հակասութիւնը, որ մի աւելորդ փաստով ևս պատռուել է նրանց զիմակը և մերկացրուել ինտերնացիօնալիզմի թշշուառ կեղծարարների վուլգար գերմանաիրութիւնը: Այն պարունները, որոնք խորշում էին սօցիալգեմօկրատական խոշոր կուսակցութեան (Շայդեմանի թեր) ներկայացուցիչների հետ «խաղաղութեան առեւտուր» («Правда»-ի խօսքերը) անելուց, համարելով նրանց իմպերիալիստ կառավարութեան (գերմանական) վաճառուած դաւաճաններ,

և իմպերիալիստ երկրի (Պերմանիայի) յաղթութեան գնով: Դնել հարցը, նշանակում է պատասխանել: Ցիմմերվալդիզմը ուրիշ բան չէ, բայց թէ վերջին հաշւով, զերմանական իմպերիալիստական նուաճութների օրինատացիա: Մենք աւելի կհամոզւենք դրա մէջ յետագայ գիտողութիւններից:

համարւում է բօլշեվիկների աջըռում «հակախիստերնացիօնալիստական» և որպէս զի փրկէին նրանք ցիմմերվալդեան «ինտերնացիօնալիզմի» կասկածառարակ ֆօրմուլը, պէտք է նրանք նոյն իսկ մի քայլ էլ հեռու գնային, վերջին հաշով դարձեալ յօդուտ Գերմանիայի:

Եւ իրաւ, բօլշեվիկները քափ ու քըթինքի մէջ գործի դիմեցին այդ ուղղութեամբ:

Նրանք ոչ միայն հակառակ էին, որ յեղափոխական զօրքը առաջ խոյանայ միապետական զօրքի դէմ և մաքրէ իր արդէն ապատ երկրի սահմանները, այլև, ով զարմանք, բուռն եռանդով ազիտացիա մղեցին յօդուտ «Եղբայրացման» գաղափարի ուազմաճակատում։ Ուուս զօրքը չպէտք է կոռւի Գերմանիայի դէմ, այլ իր բոլոր մասերում պիտի «Եղբայրացման» փորձերի դիմէ հակառակորդի հետ։ «Եղբայրացումը» սեպուեց, որպէս խաղաղութեան հասնելու ապահով միջոցներից մէկը։

Ինչպէս կարելի է առաջխաղացման և յաղթութեան կոչ անել, դրա մէջ միայն իմպերիալիստներն են շահագրգուռած*)։

*) Իրանց այդ վերջին առարկութեան մէջ ցիմմերվալդիստ բօլշեվիկները միայն այն ժամանակ կունենային իրանց ձևական արդարացումը, եթէ պատերազմի սկզբում նրանք միակողմանի դիրք չընէին առնասարակ դէպի կուոզ երկրները։ Իբրև ցիմմերվալդիզմի «դօգմայի» ներկայացուցիչներ, նրանք չպէտք է «պարտողական» աեսակէտ պաշտպանէին ընդդէմ հին Ռուսիայի, որովհեաւ եթէ մի հոսանք պաշտպանում է մի երկրի պարտուելու ցանկալիութիւնը, ապա նաև դրանով, կամայ ակամայ, անուղղակի կերպով, պաշտպանում է միւս (հակառակորդ) երկրի յաղթութեան ցանկալիութիւնը։ առանց վերջնի յաղթութեան, չկայ և չի կարող լինել առաջնի պարտութիւնը, զա պարզ է առանց այլեայի։ Հարց է ծագում. ինչու իմպերիալիստական է համարւում յեղափոխական զօրքին ուղղած յաղթական կոչը՝ ընդդէմ բէակցիօն երկրի միապետական զօրքի, և իմպերիալիստական չի համարւում (ընդհակառակը յեղափոխական է հոչակւում) մի բէակցիօն երկրի (նախկին Ռուսիայի) պարտութիւն՝ միւս բէակցիօն

Այդպէս էր բարբառում Լենինի յայտնի ըեցեպաներից մէկը, որ ստրկական հսազանդութեամբ թութակեցին նրա գաւառական բոլոր հլու աշակերտները։

Վիկտոր Զերնովը կատարեալ իրաւացիութեամբ մի սրամիտ նկատողութիւն է արել Լենինի այդ ըեցեպտի վերաբերմամբ։ Յունիսի սկզբներին, Բան, և Զին. պատգամ։ խորհուրդների համառուսական համագումարի ժամանակ (Պետրօգրագում) Զերնովը իր ճառի մէջ ասել է ՚ի միջի այլոց հետեւեալը. Լենինը մի կողմից հրաժարւում է Շայդեմանի և ընկ. հետ խաղաղութեան բանակցութիւններ վարելուց (խոսքը վերաբերում է սօցիլիստական կօնֆերենցիային), իսկ միւս կողմից յանձնարարում է ուուս զօրքերին «Եղբայրանալ» ճակատում գերմանական զօրքի հետ, մոռանալով կամ անդիտանալով, որ գերման զօրքի մի մասը Շայդեմանի կողմնակիցներն են (բանւորներից բաղկացած), իսկ աւելի մեծ մասը ստրկօրէն ենթարկուած է աակաւին վիլելմ Ա-ի հրամաններին։

Շատ ճիշտ նկատողութիւն։ Բայց այժմ այնքան է խորացել բօլշեվիկների երկդիմի քաղաքականութեան հակասութիւնը, որ մի աւելորդ փաստով ևս պատռուել է նրանց գիմակը և մերկացրուել ինտերնացիօնալիզմի թըշուառ կեղծարարների վուլգար գերմանասիրութիւնը։ Այն պարոնները, որոնք խորշում էին սօցիալգեմօկրատական խոշոր կուսակցութեան (Շայդեմանի թեր) ներկայացուցիչների հետ «խաղաղութեան առեսուր» («Պրավդա»-ի խոսքերը) անելուց, համարելով նրանց իմպերիալիստ կառավարութեան (գերմանական) վաճառուած դաւաճաններ, և իմպերիալիստ երկրի (Պետրօնիայի) յաղթութեան գնով։ Դսել հարցը, նշանակում է պատասխանել։ Ցիմմերվալդիզմը ուրիշ բան չէ, բայց թէ վերջին հաշուով, գերմանական իմպերիալիստական նուաճումների օրինաւացիա։ Մենք աւելի կհամոզուենք դրա մէջ յետագայ գիտողութիւններից։

այսմ նոյն այդ պարոնները՝ Լենին-Տրօցկու ներկայացուցիչները, փորսող են տալիս Վիլհելմի գեներալ շտաբի դոներին՝ «խաղաղութեան առևտուր» են անում իմալերիալիստ և միավետական կառավարութեան արդէն անմիջական ներկայացուցիչների՝ «նոցին մեծութիւններ և գերազանցութիւններ» բաւարական թագաժառանգի, ֆօն Կիւլմանի, կօմս Չերնինի, գեներալ Հոփմանի և այլ բարձրատիտոս երեւլիների հետ:

Մենցեվիկական և էս-էր-ական օրդանները և նոյն իսկ ցիմմերվալդեսն «ինտերնացիոնալիստների» կամ կիսարօլեվիկների բերան «Новая Жизнь»-ը հեղաքար նկատել են այդ ակներև փասար, մեղադրելով բօլեվիկներին, որ նըրանք գնացել են Բրեստ (զինադադարի բանակցութիւնների տեղը) «առևտուր» («օճներ») անելու Վիլհելմի և գերման իմպերիալիստների հետ։ Ճշմարտութիւնը քիչ թէ շատ յարդող հակառակորդին մնում է համարձակ խոստովանել այդ մեղադրանքի հանդէս, որ իրանք, այն, սեղմում են Վիլհելմի գեներալների ձեռքը խաղաղութեան առևտուր անելու համար։ Բայց Լենինի լէյր-օրդանը՝ «Правда» անունով, որ այնքան է հեռու ճշմարտութիւնից, որքան ինքը ճշմարտութիւնը հեռու է կեզծիքից ու սուտից, քաջութիւն չունի անուրանալի փաստը անվերապահօրէն խոստովանելու։ Նա մեղքի մէջ բռնուածի նման ծամածութիւններ է անում և ոչ միայն աշխատում է ուրանալ վերագրած մեղադրանքը, այլև նոր կեղծիքներ և խեղաթիւրումներ է անում իր առաջնորդող յօդուածում (№ 207, գեկտ. 6-ին հ. տ.): «Правда»-ն ուղում է հաւատացնել, որ իր կուսակցութիւնը պաշտպանել է միշտ այն միտքը, որ «զինադադարի և խաղաղութեան առաջարկով պէտք է գիմել միաժամանակ կուսող երկրների եւ կառավարութիւններին և ժողովրդներին»։

Այստեղ Լենինի թերթը բարեհաճում է եւ ստել եւ խեղաթիւրել փաստը, իր կուսակցութիւնը միշտ պաշտպանել է այն միտքը, որ պէտք է կառավարութիւնների զիմի վրայից ձեռք մեկնել թիկունքում ապստամբող ժողովրդներին և նրա հետ խաղաղութեան դաշն կապել։ Այդ միտքը ոչ միայն շարունակ կրկնել են բօլեվիկները, քանի նրանք օպօզիցիայի մէջ են եղել, այլև նոյն իսկ այժմ նշանց Բրեստ գնացող ներկայացուցիչը՝ Կամենեվը, շեշտել է նոյնը, ինչպէս յետոյ կաեսնենք։ Սա «Правда»-ի ստիրաժինն է։ Այսուհետեւ նա խեղաթիւրում է, երբ խօսում է առհասարակ կուսող երկրներին խաղաղութեան առաջարկով զիմելու մասին։ Բօլեվիկները, ինչպէս յետոյ կաեսնենք, քնքոյց հոգատարութեամբ սեպարատ խաղաղութեան ձեռք են մեկնել միայն գերմանական կօալիցիային, իսկ գաշնակիցների նկատմամբ պ. Տրօցկին միայն անարժան խաղ է սարքել։ Իր սուտը թիւելուց յետոյ, Լենին-Տրօցկու պաշտօնական բերանը աշխատում է յետին գոնով արդարացնել իր կուսակցութեան քայլը՝ գերմանական կառավարութեան դիմելու նկատմամբ։ «Պատեհական կառավարութեան բանակցութիւնները վարել կարող է միայն կառավարութիւնը»։

Միանգամայն ճիշտ է, առանց պատ է պատ ընկնելու և «ժողովրդներին դիմելու» մասին առավելներ հիւսելու, հէնց սկզբից և ուղղակի պէտք է այսպէս յայտարարէիք։ Ի՞նչ կարող է ստել ժողովրդը մի երկրում (Գերմանիայում) ուր պատերազմ յայտարարելու և խաղաղութիւն կնքելու կարեւորագոյն հարցերը կախուած են նոյն իսկ ոչ թէ պատասխանառու (պարլամենտի առաջ) կառավարութիւններից, այլ միայն մի մարդուց՝ Վիլհելմ Ռ-ի

այսմ նոյն այդ պարուները՝ Լենին-Տրօցկու ներկայացուցիչները, փորսող են տալիս Վիլհելմի գեներալ շտաբի դռներին՝ «խաղաղութեան առևտուր» են անում իմակերիալիստ և միավետական կառավարութեան արդէն անմիջական ներկայացուցիչների՝ «նոցին մեծութիւններ և գերազանցութիւններ» բաւարական թագաժառանգի, ֆօն Կիւլմանի, կօմս Զերնինի, գեներալ Հոֆմանի և այլ բարձրատիտոս երևելիների հետ:

Մենշեվիկական և էս-էր-ական օրդանները և նոյն իսկ ցիմմերվալդեան «ինտերնացիօնալիստների» կամ կիսաբոլշեվիկների բերան «Շովալ Ջուզի»-ը հեղնաբար նկատել են այդ ակներև փաստը, մեղադրելով բոլշեվիկներին, որ նըրանք գնացել են Բրեստ (զինադադարի բանակցութիւնների տեղը) «առևտուր» («օճնուած») անելու Վիլհելմի և գերման իմպերիալիստների հետ: Ճշմարտութիւնը քիչ թէ շատ յարդող հակառակորդին մնում է համարձակ խոստովանել այդ մեղադրանքի հանդէպ, որ իրանք, այն, սեղմում են Վիլհելմի գեներալների ձեռքը խաղաղութեան առևտուր անելու համար: Բայց Լենինի լէյր-օրդանը՝ «Պրավդա» անունով, որ այնքան է հեռու ճշմարտութիւնից, որքան ինքը ճշմարտութիւնը հեռու է կեզծիքից ու սուսանց, քաջութիւն չունի անուրածնալի փաստը անվերատահօրէն խոստովանելու: Նա մեղքի մէջ բռնուածի նման ծամածութիւններ է անում և ոչ միայն աշխատում է ուրանալ վերագրած մեղադրանքը, այլև նոր կեղծիքներ և խեղաթիւրումներ է անում իր առաջնորդող յօդուածում (№ 207, գեկտ. 6-ին հ. տ.): «Պրավդա»-ն ուզում է հաւատացնել, որ իր կուսակցութիւնը պաշտպանել է միշտ այն միտքը, որ «զինադադարի և խաղաղութեան առաջարկով պէտք է դիմել միաժամանակ կուսող երկրների եւ կառավարութիւններին»:

Այստեղ լենինի թերթը բարեհաճում է եւ ստել եւ խեղաթիւրել փաստը: Իր կուսակցութիւնը միշտ պաշտպանել է այն միտքը է կառավարութիւնների զիմի վրայից ձեռք մեկնել թիկունքում ապստամբող ժողովրդներին և նրա հետ խաղաղութեան դաշն կապել: Այդ միտքը ոչ միայն շարսւնակ կրկնել են բօլշեվիկները, քանի նրանք օպօզիցիայի մէջ են եղել, այլև նոյն խոկայժմ նրանց Բրեստ գնացող ներկայացուցիչը՝ կամենեվը, շեշտել է նոյնը, ինչպէս յետոյ կտեսնենք: Սա «Պրավդա»-ի ստիրաժինն է: Այնուհետեւ նա խեղաթիւրում է, երբ խօսում է առհասարակ կուսող երկրներին խաղաղութեան առաջարկով դիմելու մասին: Բօլշեվիկները, ինչպէս յետոյ կտեսնենք, քննքոյց հոգատարութեամբ սեպարատ խաղաղութեան ձեռք են մեկնել միայն գերմանական կօպօզիցիային, իսկ գաշնակիցների նկատմամբ ող. Տրօցկին միայն անարժան խաղ է սարքել: Իր սուտը թիսելուց յետոյ, Լենին-Տրօցկու պաշտօնական բերանը աշխատում է յետին գոնով արդարացնել իր կուսակցութեան քայլը՝ գերմանական կառավարութեան դիմելու նկատմամբ: «Պատերազմական գործողութիւնները գագարացնել կարող են միայն լիազօրուած (պոլիոմոչիա) իշխանութիւնները: Խաղաղութեան բանակցութիւնները վարել կարող է միայն կառավարութիւնը»:

Միանգամայն ճիշտ է, առանց պատ է պատ ընկնելու և «ժողովրդներին դիմելու» մասին առասպելներ հիւսելու, հէնց սկզբից և ուղղակի պէտք է այսպէս յայտարկեիք: Ի՞նչ կարող է ասել ժողովրդով մի երկում (Գերմանիայում) ուր պատերազմ յացտարելու և խաղաղութիւն կնքելու կարևորագոյն հարցերը կախուած են նոյն իսկ ոչ թէ պատասխանատու (պարլամենտի առաջ) կառավարութիւնից, այլ միայն մի մարդուց՝ Վիլհելմ II-ի

անձնական կամքից, որի առաջ միայն պատասխանառու է գերմանական կառավարութիւնը։ Նշանակում է ճիշտ է կատարելապէս, պարոնայք բօլշևիկներ, երբ ձեր հակառակորդները նետում են ձեր ճակատին՝ վիճելմի հետ «առետուր» անելու մեղադրանքը։

Բայց «Правда»-ն չի հանգստանում իր կաշուի մէջ. նա մի սուտը խտացնում է միւս սուտով, անպատիժ կերպով ՚ի չարը գործադրելով զիւրահաւատ ընթերցողների միամտութիւնը։ Բանից դուրս է գալիս, որ գերմանական շտաբը և կառավարութիւնը «հարկադրուած հաշմածայնուել են զինազադարի և խաղաղութեան բանակցութիւնները վարելու»։ Ի՞նչու Որովհնուն հակառակ գէպքում գերմանական բոլոր զինուորների և ամբողջ ժողովրդի համար կալարգուէ, որ պատերազմը շարունակելու պատասխանատութիւնը՝ իր գրաւումների և կողմանու պատասխանատութիւնը՝ զինազադարի նպատակով, ընկնում է իրանց շտաբի և կառավարութեան վրայ։ Այսպէս է բարբառում Լենինի օֆիցիոզը։ Այսպէս դատողները, ընթերցնելով, ոչ թէ իրանք են միամիտ երեխաներ, այլ անսահման խաբւող երեխաների տեղ են ընդունում իրանց ընթերցող ու հաւատացող մասսաներին։ Պարզապէս աշքակապութիւն է, ասել որ գերման կառավարութիւնը հարկադրուած է ընդունել սեպարատ զինազադարի և խաղաղութեան առաջարկը։ Դա պարատ զինազադարի և խաղաղութեան առաջարկը։ Դա նշանակում է ուղղակի ուրանալ գերմանական զիպուտատիայի բազմանար մախինացիաների պատմութիւնը պատերազմի ամբողջ ընթացքում։ Գերմանական շտաբը և Բերլինի կարինեալ, պարոնայք բօլշևիկներ, սրտատրով սպասել են և շարունակ օրինել են գալուստը այն բարեպարէն մօմենտի, երբ հնարաւոր կլինի սեպարատ խաղաղութեամբ քանդել դաշնակիցների կուռ միութիւնը և առանձին-առանձին հարուածել բոլորին։ Գերման զինուոր-

ներն ու ժողովուրդը շատ լաւ գիտեն այդ։ Եւ ահա հասել է այդ մօմենտը։ Պատմական այն դաւաճանութիւնը, որ թոյլ չտուաւ իրան նիկոլայի կառավարութիւնը, թէկ ուզում էր նա, թոյլ տուեց իրան Լենինի կառավարութիւնը։ Բայց լաւ իմացած եղէք, որ եթէ առհասարակ հնարաւոր է սեպարատ խաղաղութիւնը, ապա դա աւելի պատւաւոր կլիների բիւրօկրատական կառավարութեան, քան բօլշևիկների տիրապետութեան օրով...

V.

Մեր հակառակորդներին աւելի լաւ ճանաչելու համար պէտք է ուշադրութեամբ քննենք նրանց գործունէութեան հիմնական լօգունգները։

Մի ըսպէ ենթագրենք, որ բօլշևիկների «եղբայրացման» լօգունգը բղիսել է նրանց յեղափոխական անկեղծութիւնից։ Հարց է ծագում. չէ՞ որ յօգուտ խաղաղութեան գործնական-բարեւար հետեւանիներ սպասելու համար այդպիսի «եղբայրացումից», անհրաժեշտ նախապայման է, որպէս զի անկեղծութիւնը լինի երկուստեք, որպէս զի յեղափոխական զօրքը (ռուսները) գործ ունենայ յեղափոխուած զօրքի (գերմանացիների) հետ, որպէս զի երկու բանակների յետև կանգնած խորհրդատու և «եղբայրացման» հրահանգներ հաղորդող մարմինները միենոյն գերմոկրատական հայեացքներն ու յեղափոխական տողորումները ունենային, առանց յետին հաշիների։

Այդ նախապայմանը կայ ուսւաների կողմից լի ու լի չափերով. ուսւ զինուորների բնական պարզամտութեան և թուլակամութեան աւելացել են նաև նրանց ականջին շարունակ հնչւող յեղափոխական լօգունգներն ու հրահանգ-

ները. Նրանք բաց սըտով ուզում են ընկերանալ և եղայրանալ թշնամու հետ:

Ասացէք, պարոնայք բօլշեվիկներ, կայ կամ կարսղ է լինել նոյն նախապայմանը գերման զինւորների կողմից: Երկուսից մէկը. կամ դուք պիտի ընդունէք, որ գերմանական զինւորները նոյնպէս յեղափոխուած են և ուստի ընկերների հետ «Եղբայրացման» անկեղծ փորձեր են անում հակառակ գերմանական շատրի կամքի և կամ այդ բոլորը պարզապէս խաղեր են յետին հաշիւներով, որոնք տեղի են ունենում Վիլհելմի հրամանատարների կատարեալ զիտրեամբ և յափած-ձեռած պրաներով: Առաջինը ընդունել չէք կարող, որովհետեւ դուք ոչ մի փաստ չունեք համոզուելու կամ ուրիշներին համոզելու, որ գերման զինւորները ազատագրուել են պրուսական երկաթէ դիսցիլինայի անողոք հրահանդներից: Նրանք կարող էին ազատագրուել այդ ստրկական ենթակայութիւնից միայն յեղափոխութեամբ որից, աւազ, այնքան մեծ զգուշութեամբ խորշել են մինչ այժմ գերմանական թէ թիկունքը և թէ զօրաճակատը: Ուրեմն դուք պիտի ընդունէք երկրնարանքի վերջին մասը. դուք պիտի ընդունէք, որ գերման զինւորները ոչինչ անկախ ու ինքնուրոյն քայլ չեն անում, այդպիսի հաւաքնիքի «անհնազանդներին» գերմանական ուազմա-կաշտային գատարանի մահապատճեն է սպանում, — այդ այդ բոլորը կատարւում են Վիլհելմի սատրապների աարշած խաղերով: Եթե գերման զինւորները օգու շիշը բարձր բըռնած հրաւիրում են ուսւոներին իրանց մօտ, ասելով «Russe, komm wodki trinke!» («Մուս, արի օղի խմիր»), ապա նրանք շատ լաւ գիտեն, թէ ինչ միջոցով կարելի է խարբել պարզամիտ ուսւին, խաղալով նրա թոյլ ջղերի հետ՝ կորզել նրա հոգու խարքից իրանց համար թանգակին տեղեկութիւններ: «Յեղափոխական» ուսւը չի կարող ոչ մի

կերպ ազգել ոչ յեղափոխական գերմանացու վրայ*): Առաջինը պարտուած ու խեղճացած երկրի տպէտ, անգրագէտ ու անկուլտուրական գաւակն է, որի վրայ կուլտուրապէս բարձր կանգնած, հրահանգուած և նպատակագիտակից գերմանացին միշտ էլ վերեւից և նայել, իր արհամարհական վերաբերմունքը արտայացտելով հանրածանօթ խօսքերով՝ «Russische Schweine und russische Barbaren» (Ռուսական խոզեր և բարբարոսներ»): Եւ եթէ այդպիսի պայմաններում պարոնայք լենինականները ըսնազրոսիկ «Եղբայրացման» կոչերով հրում էին ուստի զինւորներին դէպի Վիլհելմի սպասաւորների սարքած թակարդը, ապա նրանք զրանով վիրաւորում էին միայն յեղափոխական երկրի արժանապատութիւնը, ցեխոտելով նրա կարմիր գրօշակը:

Սակայն գերմանական խաղը միայն այդ արտաքին մանեօվրներով չէ վերջանում: «Եղբայրացնումը», որ տեղի է ունենում վերին հրամանատարութեան յատուկ կարգադրութեամբ, ունի իր նախորոշած նպատակը: Ի՞նչ բանն է ցանկանալի մի պատերազմող երկրի համար, եթէ ոչ իր հակառակորդներից մէկին լքման ու կազմակուման դատապարտելիք: Ի՞նչ բանը կարող է այնքան փա-

*) Ճիշտ այնպէս, ինչպէս յետամաց Ռուսիան չէր կարող իր որուցնորու յեղափոխութեամբ ազգել և օրինակ դառնալ առաջնակարգ Գերմանիայի համար, այնպէս էլ յետամաց երկրի որդին (ուստի զինւորը) չէր կարող ոչ մի զէսքրում պատկառանք ազգել և ներշնչել իր յեղափ. տողորութիւնները բարձր կանգնած երկրի զաւակի (գերման. զինւորի) վրայ: Թող մի անգամ ընդմիշտաւութիւնն պարոնայք բօլշեվիկները այդ տարբական իրողութիւնը: Այս նշանակութիւնը, ինչ իր ժամանակին ունեցել է ամենից բարձր կանգնած Ցրանսիան իր յեղափոխութեամբ ամբողջ Եվրոպայի և մասնաւորապէս Գերմանիայի համար, երեխայական զառանցանք է նոյն կարդի նշանակութիւն վերաբերել ուսւական յեղափոխութեան, թէկուզ «սօցիալիստական յեղափոխութիւն» հոչակուած լենինական սկանդալ ապստամբութեան:

փագելի լինել բազմաթիւ թշնամիների հարուածներին ենթակայ և ուժասպառող Գերմանիայի համար, եթէ ոչ հետեւալը. ՚ի յիշ յայտարարել ուուական ձիգ ու հսկայ ուզմանակատը՝ վերջին ծայր կազմալուծելով և կոռու անընդունակ դարձնելով ոռուս զօրքին և ոյժեր խնայել աւել յամառ ու վտանգաւոր հակառակորդների դէմ ուղղելու համար ֆրանսիական (ինչպէս և իտալական) ուզմանակատում: Եւ ինչպէս ուրիշ շատ դէպքերում, այնպէս էլ այս անգամ, գերմանական մախինացիաները փայլուն յաջողութիւն ունեցան:

Ասացէք, ընթերցող, միթէ ամեն մի դատելու ընդունակ մարդուն մատչելի այդ տարրական իրողութիւնը կարող էր վրիպել բօլշեվիկների մտքի տեսողութեան հորիզոնից: Մենք տրամադիր չենք ամենելին մեր գաղափարային հակառակորդներին անչափահաս երեխաների նայիւ դերերի մէջ պատկերացնել...

«Եղբայրացման» լօգունզը՝ իր էութեամբ և տեսնդենցներով, ուրիշ բան չէր, բայց եթէ սեպարատ կամ անջատ զինադադարի սկզբնաւորութեան մի վորած ուռւսական ճակատում: Եւ այդ հանգամանքը իրանք բօլշեվիկները աւելի լաւ գիտեին, քան ուրիշ որևէ մէկը: Հակառակ բոլոր կեզծ ու մանուածապատ հաւաստիացումների, նըրանք նկատուել են միշտ մեր աչքում, իրեւ սեպարատիստներ՝ սեպարատ զինադադարի և խաղաղութեան կողմանակիցներ Գերմանիայի (հետեւապէս նաև գերմանական կօպիցիայի) հետ: Քանի օպօզիցիայի մէջ էին, հերքում էին նըրանք ամեն մի նման ձգտում իրանց կողմից: Եւ ուրիշ կերպ էլ չէին կարող, որովհետեւ այն ժամանակ կվերանար այդ հարցում ամեն մի տարբերութիւն հին ըէժիմի գերմանօֆիլ ներկայացուցիչների (Սուխոմլինովի Շտիրմերի, Պրոտոպոպովի) և բօլշեվիկների միջև: Իսկ

դա ամենելին ձեռնտու չէր օպօզիցիայի մէջ գործող և մաքուր գաղափարների անունով մասսաներ որսացող ֆրակցիայի համար: Սակայն այն, ինչ հերքում էին նըրանք խօսքով, փաստօրէն կատարում էին նըրանք գործով ամենայն եռանդով: «Եղբայրացման» լօգունզի խարուսիկ շղարշի տակ լենինականները սեպարատ զինադադարի և սեպարատ խաղաղութեան համար նող էին պատրաստում:

Այսօր արդէն ապրում ենք ոռուս երկրավիճակի այն մօմենտը, երբ մեր ենթադրութիւնները բօլշեվիկների նկատմամբ լի ու լի չափերով իրականացել են: Յափշտակելով քաղաքական իշխանութիւնը, տէր գառնալով զօրակայանին և զօրամասերի կամքին, նըրանք հանել են արդէն իրանց դիմեկները և առանց քաշուելու բացարձակ բանակցութիւնները են վարում սեպարատ հաշառութիւն կնքելու համար: Պարոն Տրոցկու հրապարակական խեղկատակութիւնները՝ գաշնակիցներին նոյն զինադադարի առաջարկն անելու նկատմամբ, բօլշեվիկներին ենթարկուած դիմաւատ ամբոխի առաջ ձևապէս արդարանալու նպատակն ունեն միայն և ուրիշ ոչինչ: Նախ և առաջ գաշնակիցները չէին կարող հաշուի նստել մի կառավարութեան հետ, որի իշխանութեան օրինականութիւնը չեն ճանաչում նըրանք, որովհետեւ նա օրինական չէ նոյն իսկ իր երկրի ամբողջութեան աշքում: Երկրորդ՝ ինչպէս կարող էին դաշնակիցները մի օրուայ (թէկուզ մի քանի օրուայ) ընթացքում իրանց այս կամ այն ցանկութիւնը հաղորդել Պետրովը առը «կառավարութեան», եթէ նոյն խել նըրանք ճանաչէին նրա օրինականութիւնը^{*)}): Զէ՞ որ այդ-

*) Դաշնակից պետութիւնների գեսապաններին ուղղած նամակից մի օր անցած լենին-Տրոցկու «կառավարութիւնը» հրաման է արձակում ճակատին զինադադարի բանակցութիւններ սկսել գերմանացիների հետ: Այդ հրամանով բօլշեվիկները փաստում են դաշնակիցների ընդհանուր պայմանագիրը և

պիսի մի յասկարծակին եկած վերին աստիճանի ծանրակրշի հարցի համար իրարից այնքան հեռու գտնուող բազմաթիւ գաշնակից պետութիւնները պիտի իրար մէջ կարծիքների փոխանակութիւն ունենային և միահամուռ համերաշխութեամբ հանդէս գային։ Դաշնակիցները այնպիսի թեթևամտութեամբ ու ժակերևոյթօքչն չեն նայում իրանց երկրների շահերին ու ապագային, ինչպէս ուսւ քաղաքական շարլուտաններն ու աւանտիւրիստներն են նայում Ռուսիայի վրայ։

Նշանակում է բօլշեվիկական և ոչ մի կլունութիւն չի կարող խարդախել պատմական անցքերի բնոյթը։ Անջնջելիօքն արձանագրուել է արդէն պատմութեան էջերում, որ բօլշեվիկական «կառավարութիւնը» կանխածածուած սեպարատ է յայտարատել և նոյն գիմում են սեպարատ զինուդադարը։ Յանակյութիւնների ընդհատման ժամանակ Տրոցկին նորից դիմում՝ է գաշնակիցներին, տալով նրանց չորս օր ժամանակ՝ նոյնիմբերի 15—19-ը (ն. տ. գեկտ. 1): 4 օրուայ ընթացքում, որ ներկայ պայմաններում հազի կարելի է տեղ հասցնել հեռագիրները, պ. Տրոցկին սպասել է, որ Լօնգոնն ու Պարիզը, Հռոմը, Վաշինգտոնն ու Տօնիին և այլն կարծիքների փոխանակութիւն ունենան և յայտնեն իրանց պատասխանը Պետրօ գրադի «գիպումաններին»։ ՚՚Ի նարկէ, այդ տասիճան երեխայ կամ ցանցառամբ չենք պատկերացնում մեզ պ. Տրոցկուն։ Նրան հարկաւոր էր որևէ չ շնորու առիթ խելակրայ մասսաների առաջ արդարանալու համար։ Առանց այդ առիթի չեր կարող նա այս պիսի սպասնալիք կարգալ գաշնակիցների հասցէին «Որածա»-ի էջերում, նոյնիմբերի 15-ին։ «Բուռ զօրքը և ուսւ ժողովուրդը չեն կարող և չեն ուզում աւելի երկար սպասել։ Դեկտեմբերի 1-ին (հին տոմ. նոյնիմբ. 19-ին) մենք սկսում ենք խաղաղութեան բանացութիւնները։ Եթէ գաշնակից ժողովուրդները չ ուղարկեն իրանց ներկայացնեցիներին, մենք կվարենք բանակցութիւնները գերմանացիների հետ առանձին։ Լաւ բացէք. չորս օրուայ մէջ ոչ միայն պատասխան է սպասել պ. Տրոցկին, այլի հսարաւոր է գտել գաշնակից ժողովուրդների ներկայացնեցիների գալուստը հեռաւոր երկրներից։ Վերջապէս մոքի ցինիզմն էլ ունի որոշ սահմաններ։ Ռուսիական էր ենթագրել, որ բօլշեվիկական կատելակեր պը ունի ցինիզմի տարրեր նորմաներ։

քան կանխամտածուած սեպարատ հաշտութիւն է կնքում գերմանիայի հետ*): Իսկ բօլշեվիկական այդ ազաղակիչ ակտը ոչ աւել է և ոչ պակաս, բայց եթէ երբակի ոճ-

*) Պ. Տրոցկին չի բաշւում այդ միտքը ուղղակի արտայայտելուց, իմանք ընդունելով իր դիմամեմ ստեղծած շնորու առիթը։ «Մենք ուզում ենք ընդհանուր խաղաղութիւն, — զրում է նա վերջիշեալ իր կոչի շարուսակութեան մէջ, — իսկ եթէ գաշնակից բոյշիների բուրգուազիան հարկադրէ մեղ կնքելու սեպարատ երկիրների բուրգուազիան ընդհանուր լուսնում է ամբողիազարդութիւն, ապա պատասխանաւուութիւնն ընկնում է արշապէս նրա վրայ։ Աւշագրութիւն գարձրէք բօլշեվիկների «արշապէս» քաղաքականութեան գեկավարի զատելակերպի վրայ։ Վերին սպասնում է նա սեպարատ զինադադարով, իսկ այստեղ սեպարատ խաղաղութեամբ։ Հնտաքրիբեր է, ինչնով կարող էին պաշնակից երկիրները հարկադրել ուսւական նորաթուիս «կառավարութեանը» գաւաճանելու նրանց սեպարատ խաղաղութեան սպամալիքով։ միայն նրանով, որ նրանք չորս օրուայ ընթացքում չեն կատարել և անկարող էին կատարել Տրոցկու պահանձը։ Եթէ այսպէս զատող պարոնը նոգերուժարանի կարիք ունեցող սերից չէ, ապա նրա իտին խարդախ միտքը պարզ է վերջին աշակերտին անգամ։ Խարն էլ զգալով սեպարատ խաղաղութեան շակերտին անգամ։ Խարն էլ զգալով սեպարատ խաղաղութեանը շակերտին պատասխանաւութիւնը, շնորու յերիւրանքով, թող հրէշային պատասխանաւութիւնը, զիշելու համար, վաթաթում է նա այդ պատասխանաւութիւնը վիշերին։ Զենք կատածում, որ «ամբողջապէս» գաշնակիցների վիշերին։ Զենք կատածում, որ խաղաղութեամբ մասսան վաղ թէ ուշ կրանէ զաւադիր քաղաքականութեամբ նոյնիմբերի 12-րատ խաղաղութեամ միտքը ընորու ակնարկներով։ Նոյնիմբերի 12-ին (№ 187-ում) պրում է «Որածա»-ն ՚ի միջի այլոց հետեւալը։ «Ինչու պատերազմը վերջացնելու համար յարարերութիւնների հարաւոր խողումը իմպերալիստական Անգլիայի հետ համարում է ոճրագործութիւնն, իսկ պատերազմը շարունակելը համապատասխանում է գեմօկրատիայի շահերին։ Այս տողերի մէջ ուշագրաւ է այն բացայատ ակնարկը, թէ ինչպէս բօլշեվիկ քաղաքականները՝ իրանք էլ զգալով իրանց խաղաղի խաղի անաջող գաղաքանների պահաւոր ձգտումը եղել է Փերմանիայի հետ խաղաղութիւն կնքելը, իրանք էլ չհաւատալով ընդհանուր և գեմօղադրութիւն կնքելը, իրանք էլ չհաւատալով ընդհանուր և գեմօղադրութիւն կնքելը, իրանք էլ չհաւատալով ընդհանուր, յամենան գէպս կրատական խաղաղութեամ նախագութեամ նորմաներ։

բագործութիւն ու դաւաճանութիւն:

Դա պատմական աններելի ոճրագործութիւն ու դաւաճանութիւն է գաշնակից երկրների ղեմօկրատիաների դէմ, խաղտելով համերաշխութեան ընդհանուր պայմանը:

Դա սկզբունքայն ոճրագործութիւն է իր սեփական գաղափարային էութեան դէմ, երբ իրան ուլտրա-յեղափոխական և ոսցիալիստական անուանող մի կուսակցութիւն խաղաղութեան ձեռք է սեկնում ուլտրա-բէակցիօնէր և միավետական-իւնկերական կառավարութեան:

Դա, վերջապէս, բարոյական ոճրագործութիւն ու դաւաճանութիւն է մասսաներ խարող իր սեփական խոստումների, անցեալի և հաւատող ու վստահութիւն տածող մասսաների դէմ:

'Ի հարկէ, բօլշեվիկները ունեն խարուած մասսաների առաջ ինք զինքը արդարացնելու գեմազօգիական բոլոր պատրաստի պրիօնները և շարլոն առարկութիւնները.— Աենք չենք ընդունում նիկոլայ Ռ-ի կուած պայմանագիրը իմակերիալիստական գաշնակիցների հետ, — սա է անճարակ ողորմելիների ինքնարդարացումը:

Բայց ովքեր են այդպէս դատում. նրանք, որոնք խաղաղութեան պայմանագիր կուելու ստորացուցիչ առևտուրն են անում նիկոլայ Ռ-ի հոգեհարազատ կողակից և գաղափարակից Վիլհելմ Ռ-ի ծառաների հետ. նրանք, որոնք թքելով իրանց երէկուայ ուխտի վրայ՝ խաղաղութիւն կնքել միմիայն զերմանական ժողովրդի հետ, այսօր լակէյական պատրաստակամութեամբ գերմանական պրինցների և գեներալների ձեռքն են խնդրում. նրանք, որոնք յեղափոխութեան կարմիր գրօշակը նետելով նորին մեծութեան Վիլհելմ Ռ-ի ձիու սմբակների առակ, վերջին ծայր վիրաւորեցին և արատաւորեցին ոռւսական Մեծ Յեղափոխութեան պատմական վեհութիւնը:

Ահա ովքեր են բօլշեվիկները:

Այդ պարոնները ոչ միայն օազօղիցիայի մէջ եղած ժամանակն են խաղացել «ժողովուրդների ընդհանուր, ղեմօկրատական և արդար խաղաղութիւն» բառերի հետ, այլև իրանց տիրապետութեան առաջին օրերին՝ «խաղաղութեան գեկրետի» մէջ և, ով զարմանք, նոյն իսկ այն ժամանակ, երբ նրանք պատգամաւորներ են ուղարկել և զինադարի բանակցութիւններ են սկսել ոչ թէ զերմանական ժողովրդի կամ բոլոր ժողովուրդների ներկայացուցիչների հետ, այլ միայն և բացառապէս կայզերի բէակցիօնէր կառավարութեան երեւլիների հետ: Զէք հաւատում, ընթերցող, համեցէք կարդալ պ. Տրօցկու վերոյիշեալ զիմումի մէջ (նոյեմբերի 15-ին «Պրավձա»-ի մէջ) այս խօսքերը. «Մեր առաջարկած խաղաղութիւնը պէտք է լինի ժողովրդների խաղաղութիւն: Նա պէտք է լինի ազնիւ համաձայնութիւն, որով կարելի լինի ապահովել ամեն մի ժողովրդի անտեսական և կուլտուրական զարգացման ազատութիւնը»: Մտքի ու զրչի անորակելի պոռնկացում. է հարկաւոր՝ այս աստիճան արհամարհելու համար հաւատն ու վստահութիւնը այն մասսաների, որոնց անունը անխղճօրէն շահագործում են քաղաքական պատենտաւոր սպեկուլարները: Միևնույն զիմումի մէջ միմնոյն մարդը, «ժողովրդների խաղաղութեան և ազնիւ համաձայնութեան» անունից է խօսում և միաժամանակ միայն չորս օր ժամանակ է տալիս նրանց (կարծես նըրանց բոլորի վիճակը յանձնուած է պ. Տրօցկու տնօրինութեան), սպառնալով միայնակ կնքել խաղաղութիւն, այն էլ, 'ի հարկէ, ոչ զերմանական ժողովրդի, այլ զերմանական իմակերիալիստական կառավարութեան ներկայացուցիչների հետ:

եթէ բօլշեվիկները կարլ Մարքսի հետևողական աշակերտները լինէին, ապա այդ պատերազմի ընթացքում, մասնաւանդ ռուսական յեղափոխութիւնից յետոյ, նրանք կը ունեին ճիշտ այն գիրքը դէպի Գերմանիան, ինչ բանել էր Մարքսը Ղրիմի պատերազմի ժամանակ (1853—54թ.) դէպի Ռուսիան։ Անցեալ գարի 40—50 թուականներին, ինչպէս յայտնի է, Նիկոլայ 1-ի Ռուսիան համարւում էր միջազգային-ժանդարմիական բէակցիայի ամենավտանգաւոր որջը, Եւրոպական ժողովրդների պատագրութեան, Երիտասարդ բուժուազիայի յեղափոխական ձգտութեանը (ուղղած ֆէօդալիզմի դէմ) ահաւոր թշնամին ու խոչընդոտը։ Ղրիմի պատերազմը լաւագոյն միջոցներից մէկն էր հարուածելու «միջազգային ժանդարմի» արտաքինքագականութեան պրեստիժը, յաղթելով նրան պատերազմի գաշտում, յաղթել նաև նրա բէակցիան Երկրի ներսում և դրանով յեղափոխական ալիքների բռնկման համար հող ու ճանապահ պատրաստել։ Եւ ահա Մարքսը իր կրակոտ յօդուածների մէջ պաշտպանելով այդ հիմնական միտքը «հրձուանքով ողջունում է Ղրիմի պատերազմը»*), յարձակում է Անգլիայի և Ֆրանսիայի դանդաղ-

*.) Երկար տարիներ Մարքսը աշխատակցել է Լոնդոնից «New York Tribune» լաբունիք։ Նրա յօդուածները ինտերվիվ ժողովին և առանձին ժողովածուով հրատարակել է նրա զուստ կիխոնօրա Մարքսը՝ «Արևելեան հարցը» վերնագրով (1897 թ. 660 մեծադիր էջեր)։ Ահա այդ ժողովածուի մէջ Մարքսը երկար կանգ է առնում Ղրիմի պատերազմի վրայ և հեռանկարները պարզում այն փոխառնչութեան մասին, որ կարող էին ունենալ պատերազմն ու յեղափոխութիւնը այն դէպում, եթէ Ղրիմի պատերազմը զարգանալով վերածուէր համաեւրոպական պատերազմի։ Այդ յօդուածների մասին Մարքսի թոռ Փ. Լօնգէն զետեղել է մի գրուածք «Современный Миръ» ամսագրում, 1917 թ. № 1, Ամաս եր. 199, «Проблемы международных отношений» վերնա-

կոտութեան ու անվճռականութեան դէմ։ Ռուսիայի նըկատմամբ, կոչ է անում ոչ միայն այդ Երկրների, այլև Եւրոպական ուրիշ պետութիւնների (օրինակ Պրուսիայի, Աւստրիայի) հասցէին, որ միանան բոլորը Ռուսիայի դէմ և ջախջախեն նրա հազարզվական հիգրան։

Այն կաշկանգող խոչընդոտը, ինչ ներկայացնում էր այն ժամանակ ցարական Ռուսիան Եւրոպայի բռնժուական դեմոկրատիալի քաղաքական առաջխաղացումների դէմ, ճիշտ նոյն խոչընդոտը ներկայացնում է այժմ իւնկեր-ֆէօդալական Գերմանիան Եւրոպայի պրօլետարական դեմոկրատիայի սօցիալական առաջխաղացումների դէմ։ Եւ ճիշտ այնպէս, ինչպէս մեր անմահ ուսուցիչը իր հեղինակութեան ամբողջ թափով ծառացել էր այն ժամանակ ռուսական ցարիզմի դէմ և սրա պարտութիւնն էր տեսնչում ամբողջ հոգով, ճիշտ այդպէս էլ մեծ ուսուցչի մեծ աշակերտը՝ Գէորգի Վալենտինովիչ Պլեխանովը, իր հոգու ամբողջ կորովով ծառացել էր գեռ պատերազմի սկզբից ի վեր գերմանական կայզերիզմի դէմ և սրա պարտութիւնն էր փափագում ամբողջ սրտով։

Խեղճ Կարլ Մարքսը ի՞նչու կարելի է յաղթութեան և պարտութեան հարցեր բարձրացնել պատերազմի ժամանակ, երբ սրա ծագման պատճառները հաւասարապէս ծանրանում են բոլոր իմպերիալիստ երկրների վրայ։ Ահա, ով մեծ ուսուցիչ, այսպէս են դատում քո անունը անվերջ շահագործող նորագոյն համբակներն ու գաճաճները՝ իրանց ցիմմերվալդեան ֆօրմուլայով, մոռանալով, որ հէնց իրանը յեղափոխութիւնից առաջ «պարտողականներ» էին

գրով։ Ցիմմերվալդիս պարոնները, որ իրանց «ինտերնացիօնականականական» նորելուկ «ուսմունքը» հիմնաւորելիս հանգիստ չեն տալիս Մարքսի ուկորներին, լաւ կանէին, եթէ աւելի մօտ ճանաչէին և ոշագիր ուսումնակարէին մեծ ուսուցչի տեսակէտը։

(ցանկանալով Ռուսիայի պարտութիւնը, նրանք անուղղակի կերպով կողմնակից էին Գերմանիայի յաղթութեան): Եւ ինչպէս որ ցիմմերվալդիստ բօլշևիկները Գերմանիայի պարտութիւնը փափազող ոռւս Պլեխանովին անուանում են «իմպերիալիստ» և «սօցիալ-պատրիոտ», նոյնպիսի հետևողականութեամբ նրանք պէտք է Ռուսիայի պարտութիւնը տենչացող գերմանացի Մարքսին որակեն նոյն անմիտ էպիտետներով:

Երբ յեղափոխութիւնից յետոյ «անտօնօրոնեց» բօլշևիկների տեսակէտային հակառութիւնները մերկացնելով նրանց պատին էին սեղմում, թէ ինչու չեն ցանկանում նրանք, որ Գերմանիան ևս պարտուի, որպէս զի հնարաւոր լինի այնտեղ ևս յեղափոխութեան բռնկումը, նրանք պատասխանում էին, որ մենք չենք, որ ուրիշ երկրում պիտի յեղափոխութիւն առաջ բերենք. դա գերմանական գեմօկրատիայի գործն է: Սնանկամիտ հակառակորդի անճարակ առարկութիւն է աա: Այդ որ օրուանից է, որ հայրենիք չճանաչող, «մեր» ու «ձեր» չտարբերող ցիմմերվալդիստները անշահագրգիռ վերաբերմունք են ցոյց տալիս դէպի մի ուրիշ երկրի գեմօկրատիայի շահերն ու գործունէութեան յաջողութիւնը: Զէ որ իսկական ինտերնացիոնալիստները կենսապէս շահագրգուած են, որ պատմական ամեն մի խոշոր եղելութիւնից կարողանայ օգտուել միջազգային պլրոլետարական գեմօկրատիան՝ մի հատուած միւսին աջակցելով, որպէս զի աւելի հարթուի ու դիւրանայ դասակարգային կոռուի ճանապարհը, որպէս զի միջնադարեան բէակցիայի բոլոր մնացորդները չքանան ժամանակակից հասարակակարգի հիմքերից: Հէնց այդ առողջ տեսակէտից են ելնել Մարքսը Նըիմի պատերազմի ժամանակ, Պլեխանովը արդի պատերազմի օրով: Երկուսն էլ վարուել են իբրև ճշմարիտ ինտերնա-

ցիօնալիստներ՝ իրանց ժամանակի և տարածութեան տուեալ սահմաններում:

Ոչ, նրանք Մարքսի աշակերտները չեն. նրանք անարխիստ Դոմէլ Նիւենհայզի աշակերտներն են:

Եթէ բօլշևիկները չին ու նոր (առաջին և երկրորդ) ինտերնացիոնալի ճշմարիտ հետևողները լինէին, ապա նըրանք պիտի ազատ Ռուսիայում յայտարարէին ճիշտ նոյն գիրքը, ինչ ունեցել են միշտ իրտերնացիոնալիզմի մեծագոյն աւանդապահները՝ Աւգուստ Բերելը և Ժան Փօրէսը: Առաջինը բազմիցս կրկնել է, որ եթէ մի աւելի բէակցիօնէր և բարբարոս պետութիւն (ակնարկել է Ռուսիային) յանդգնէ յարձակուել իր հայրենիքի վրայ, ապա ինքը՝ առաքինազարդ ծերունին, հրացան կառնէ ուսին իր հայրենիքի հողն ու կուլտուրան պաշտպանելու համար արտաքին բարբարոս թշնամուց: Երկրորդը արժանի հըպարտութեամբ յայտարարել է, որ եթէ մի քաղաքականապէս յետամնաց ու միապետական երկիր (ակնարկել է Գերմանիային) վտանգ սպառնայ իր հանրապետական հայրենիքին՝ Մեծ Յեղափոխութեան դասական որրանի անմեռ նուաճումներին, ապա ինքը և իր կուսակցութիւնը բոլոր միջնամասներով կընուիրուեն վտանգուած հայրենիքի պաշտպանութեան: Երկուսն էլ՝ Բերելն ու Ժօրէսը, հասկանում, գնահատում էին իրարիտուամ մէկը միւսի գիրքը: Նրանք երկուսն էլ ճշմարիտ առաքեալներ էին իսկական ինտերնացիոնալի:

Իսկ նորաթուխս բօլշևիկ-ցիմմերվալդիստները, — որոնց տեսակէտով Բերելն ու Ժօրէսը ևս պէտք է իրանց երկրների իմպերիալիստների շարքը դասուէին, — հրաժարուամ են հայրենիքի պաշտպանութեան տեսակէտից (ծաղրելով «օборончество» ուղղութիւնը) նոյն իսկ այն ժամանակ, երբ յեղափոխութեան կարմիր դրօշակն է ա-

զատ փողփողում երկրի բոլոր ծայրերում, եթե ըէակցիօնէր թշնամին ոչ թէ նոր է պատրաստում յարձակուել հայրենիքի վրայ, այլ տարիներով հաստատուել է հայրենիքի ծոցում և մահացու վտանգ է սպառնում մանուկ հասարակապետութեան*):

Ոչ, նրանք սար ու ձորով հեռու են Մարքո-էնդելսի և Բերել-Փորէսի իսկական ինտերնացիօնալից. նրանք Բորերտ Գրիմի կասկածելի ցիմմերվալլիգմի (կամ կեղծուած «ինտերնացիօնալի») կոյր երկրպատուներն են:

Եթէ բոլեվիկները՝ Անին, Տրօգկի և ընկ., Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան կլասիկ գէմքերի հարազատ յաջորդները լինէին, ապա նրանք պիտի յեղափոխուկան Ռուսիայում ճիշտ նոյն արտաքին քաղաքականութեան հետեւին, ինչ վարել են Բաստիլեան փոթորիկի անմահ հերոսները: Երկրի ներսը ապահովելով և խորացնելով յեղափոխութիւնը, Փրանսիական յեղափոխականները ծաւալեցին իրկրի զինական ոյժերի պօտենցիալ էներգիան, ուղամական ոգին, լարեցին ողջ ազգի թագին ու կօրովը և յեղափոխական Ֆրանսիայի գէմ արշաւող եւրոպական ըէակցիօն պետութիւնների հսկայ կօպիցիան

*) Բոլեվիկ գեմագովները ոչ միայն աշխատում էին մարել զօրքի ոկորութեան վերջին կայծերը, այլև համոզի նրանց, որ հակառակորդը (գերման զօրքը) ոչ թէ թշնամի է, այլ ուստի զինուորների ընկերները, որոնց հետ միայն պիտի եղայլանալ. թշնամին, ասում էին նրանք, գերմանական զօրքը չէ այլ մեր (այսինքն ոսւս) բուրգուազիան, որոնց գէմ պիտի կտուենք: — Ամեն մի անկինում և հրապարական միտինգներում լսած կլինի ընթեցողը բոլեվիկների այդ փողոցային գեմագովիան, որի հետեւանքը եղաւ այն, որ որքան իջնում էր ուստի զինուորների կըսուելու ընդունակութիւնն ու եռանդը ճակատում, այնքան ուժեղանում էր նրա մէջ վրիժառութեան զգացմունքը և քաղաքացիական պատերազմի ու ասարիխայի ծարաւը թիկունքում, մի երեսյթ, որի տիտուր ականատեսներն ենք մինք բոլոր այսօր:

յախջախելով՝ ամենուրեք ծածանեցրին յեղափոխութեան անմեռ զաղափարները սերմանող յաղթական գրօշակը:

Իսկ այսուհետ անուաննուած բոլեվիկ «յեղափոխականները» ոչ միայն լքման ու վհատութեան դեմագովիական քարոզներով կազմալուծեցին զօրքը, բեկանեցին նրա կոռելու էներգիան, ոգին ու աւիւնը, դարձնելով նրան մի իներտ ու ճղճիւ, փախուստի դիմոզ մի երկշուած հօտ ճակատում՝ թշնամու առաջ, և անխնայ ու սանձակոծ ամբոխ թիկունքում, այլև սեպարատ զինադադարով փաստօրէն դուրս գալով ազատ ու դեմօկրատ դաշնակիցների մեծ կօպիցիայից, բոլեվիկիական «կառավարութիւնը» մօտեցաւ կիսաարսօվիւտիստ և ըէակցիօն Գերմանիային՝ իսկական աւարի մինավաճառ օքիեկտ դարձնելով յեղափոխական երկիրը իմպերիալիստ հակառակորդի գրգուած ախորժակի առաջ:

Ոչ, նրանք ոչ մի նմանութիւն չունին կլասիկ յեղափոխականների հետ, ըրքան էլ Անին ու Տրօգկին կապկական պօզաններով աշխատելիս լինեն Բորիեսպերի և Դանուոնի ուրուականները լիշեցնել: Նրանք յեղափոխականներ չեն՝ գաղափարիս կլասիք-Փրանսիական իմաստով, այլ ամենաեղկելի տիսլի բունթարականներ:

Տրօգկի-Բրօնշատայնը Բան. և Զին. պատգամ. խորհրդում արտասանած իր ճառի մէջ ասել է՝ ի միջի այլոց հետեւալը. «Երբ մենք հեռանանք (պատմական թատերաբեմից), կրստեղծուեն լեզենդաններ մեր մասին, որպէս հերոսների»: Առաջ բերելով ճղճիմ հիստերիկի և մնափառ թշնամուականի այդ խօսքերը, Պետար Մալովը՝ ուռւսական մարքարդմի լուսագոյն թէօրետիկներից մէկը, կատարեալ իրաւամբ աւելացնում է հետեւալը. «Սմօլնիի (Բան. և Զին. խորհրդի ժողովատեղին) յեղափոխականները ընդօրինակում են 1793 թ. յեղափոխականներին և

1871 թ. կօմունարներին, երևակալելով, որ նբանք շատ նման են «իսկական» «պատմական» յեղափոխականներին։ Յիմար մարդիկ, արդակս հեշտ չեք կարող խարդախել պատմութիւնը, ինչպէս խարում էք պատերազմից նուադ զինւորական մասսային և յովնած բանւորներին։ Պատմութիւնը շատ աւելի խորաթափանց է ոչ միայն ձեզնից խարուած մասսայից, այլ և այն մութ անձնաւորութիւններից, որոնք տաք անկիւն են գտել բօլցեվիկական աւանտիւրայի մէջ։ Պատմութիւնը ինսամքով արձանագրում է նրանց ամբողջ սուտն ու խարերայութիւնը և երբ նրանք չքանան թատերաբեմից, պատմութիւնը կյիշէ միայն նրանց անունները, որպէս մեծագոյն չարագործների և վատատիպ, բայց սնափառ արտիստների։ (տես Մասլովի յօդուածը՝ «История и бальшевики», «День» թերթում, № 223, գեկտեմբերի 16-ին)։ Այս, ֆրանսիական յեղափոխութեան կլասիք դէմքերի պատմական դափնիները հանգիստ չեն տալիս ոռուական բօլցեվիզմի շէֆերին, որոնք, սակայն, պատմական մասշտաբով առած՝ ողորմելի գաճաճների չափ գերազանցօրէն մանր մարդիկ են։ Պատմութիւնը միայն մի անգամ է ծանր ու ողբերգական երկունքով ցուցահանում խոշոր, հանճարեղ դէմքեր. յետագայ կը կութիւնները միայն եղկելի ֆարսեր են՝ իրանց կապկական խեղկատակներով։

Այսպէս ուրեմն, բօլցեվիկները ոչ մարդիսներ են, ոչ ինտերնացիօնայիսներ եւ ոչ յեղափոխականներ։ Նըրանք միայն վատատիպ անարկիսներ են, կասկածառորակ ցիւմերվալդիսներ եւ բռնացող բռնքարականներ։

Բայց տեսէք, վիտական սօցիալիզմի այդ կեղծարարները և յեղափոխութեան ու ազատութեան վաստական կործանիչները իրանք են, որ ամենաանխիղճ գեմագորութիւններով և գոեհիկ պրօվօկացիաներով գրգռում են

ինեղճ ու խաւար ամբոխին ընդդէմ գեմօկրատիայի կարկառուն դէմքերի։ Սօցիալիզմի, բանւորութեան և յեղափոխութեան թշնամիներ են հոչակում անխտիր բոլորը, որոնք հակաբօլցեվիկներ են, որոնք խորամտօրէն քննադատում են լենինական զառանցանքները՝ «դեկրեանների» և «թեզինների» մէջ, որոնք խիզախութիւն ու ազնւութիւն ունին մարակելու բօլցեվիկական սարսափները, խարագանելու բարքերի այլառեռումը և մտքի ու գրչի բացարձակ պոնկացումը։ Հակայեղափոխականներ և իմպերիալիստներ են հոչակում ոչ միայն կալէդիններն ու Կորնիլովները, ոչ միայն Գուչկովներն ու Միլիւկովները, այլ և ուսուական սօվիալդեմօկրատիայի հիմնադիրը և յեղափոխութեան խոշորագոյն վետերանը՝ Պլեխանովը, Ժամանակական կառավարութեան սօցիալիստ անդամները, Վիկտոր Զեբնովը, Շերեթելին, մենշեվիզմի և էս-էր-իզմի բոլոր անուանի ներկայացուցիչները։ Նոյն խել, ով զարմանք, Մաքսիմ Գորկին յայտարարուեց «բանւորութեան թշնամի»։ այն մարդը, որին երեկ պաշտամունք էին դարձել բօլցեվիկները և ցանկանում էին դնել նրա թիքնածութիւնը իրանց ընտրացուցակում (Մոսկվայի շրջանում) հիմնագիր ժողովի համար. և եթէ նա վճռականապէս չը հրաժարուէր, պիտի ընարուած լինէր բօլցեվիկների կողմից։ Մաքսիմ Գորկին—թէև դժբաղդաբար ուշացած, բայց լաւ է ուշ քան երբէք—իր հոգու ամբողջ թափով բոլորքեց և ըստ հարկին որակեց բօլցեվիկների վերջին անլուր եղեռնագործութիւնները մայրաքաղաքներում և դրանով նա ևս դասուեց յեղափոխութեան թշնամիների շարքը*): Ի՞նչ ենք ասում, անգամ «ուղղափառ» բօլցե-

*.) Ո՞ւր էր առաջ Մ. Գորկին. նա, որիր գրական հոչակը և մեծահամբաւ ժողովրդականութիւնը ամիսներ շարունակ իր օրգանի էջերում («Новая Жизнь») ժառայեցնում էր յօդուած բօլ-

վիզմի այնպիսի ներկայացուցիչներ, ինչպէս են Զինովի և Կամենի երեկուալ աջ թեր), Կամենեվը և ուրիշները յայտաբարութեցին «յեղափոխութեան դասավիճներ», որովհետեւ համարձակութիւն ունեցան քիչ թէ շատ քըն-նադատաբար վերաբերուելու գէպի իրանց «կառավարութեան» ազատահալած դիկտատուրան:

Ալդպէս է հաւասարակշունչութիւնը կորցրած մարդկանց մտածելակերպը. ով հակառակ է և բողոքում է լենինանական բօլշեվիզմի կործանարար աւանտիւրայի գէմ, ով իր յեղափոխականութեան և սօցիալիստականութեան աւեստացիան շիտանում Վլադիմիր Ռուբեանով-Լենինից*), նա թշնամի է յեղափոխութեան ու բանւորութեան, նա

վիզմի: Ո՞ւր էր նա, երբ նրա վազեմի բարեկամը՝ Վ. Բուրցեվը, խոր ցաւով զգուշացնում էր մեծանուն գրողին, որ սա միացած կասկածելի «ընկերների» հետ՝ քայլայում է Խուտիան («работате надъ разложенiemю Rossii»): Որքան տարօրինակ էր Գորկու այդ զիրքը, որքան մեծ և ցաւալի՞նրա գործած սխալը: Միթէ նա չգիտէր, որ լենինական բօլշեվիզմի լոգիկական զարգացումը պիտի յանդէր բոլորի յայտնի սխրագործ վախճանին. միթէ նա չգուշացաւ գննէ յուրիսեան արինանեղ սկանդալից յետոյ: Այժմ միայն ՚ի տես ուսւ ժողովրդի բանաբարուած իրաւունքների, ուսւ երկրի հալածուած աղաստութեան և ուսւ պիտութեան բզկիթուած ու յօշուուած վիճակի, իր հոգու ազնիւ պորթկումով ծառացել է Գորկին բօլշեվիկական հրէշաւոր ժանդարմերիայի գէմ և անինայ խարազանում է նրանց քաղաքականութեան ցարական պրիօնները: Թող «բանւորութեան թշնամի» անուաննեն նրան ուսւ յեղափոխութեան յանցաւոր տիպերը: Դա ամենալու աւեստացիան է այն բանի, որ ուսւ զրովը, ընդհակառակը, հէնց հիմա է գարձել բանւորութեան ամենաշերժ բարեկամը: Ժողովրդի սուվերէն իրաւունքների գահինները և պրօլետարիատի ողբերգական պարտութեան սիրափառ ասպետները ամենից քիչ հիմք ունեն բանւորութեան անունից խօսիրու:

*) Միակ մարդը, որ արժանացել է Վլադիմիր Լենինի բաւարոյն ատամատացիային՝ իր «սօցիալիստական և յեղափոխական» գործունէութեան համար, եղել է, ինչպէս յայտնի է, չժըրորդ Պետական Դումայի անդամ, բօլշեվիկական ֆրակցիայի լիգեր Մանիսովիկին, որին Լենինը անուանել է ոչ աւել և ոչ պակաս, քան

«ժողովրդի կողմը չի կանգնած»: Ուրիշ ինչ բանով կարող են բօլշեվիկները խուժանական բնագիններ գրգռել և խարուած մասսաներ պահել իրանց ձեռքում:

Կրկնում ենք, ովքեր են այդպէս դատում: Ովքէր են սօցիալիզմի և յեղափոխութեան աւետարանը անգութ շահագործութեան առարկայ գարձնում և նրա անունով արդարացնում իրանց բոլոր բանութիւններն ու սխրագործութիւնները, ճիշտ այնպէս, ինչպէս եղուխոնները իրանց բոլոր հրէշային գործերը արդարացնում էին Քրիստոսի բարոյախօսութեան աւետարանով:

Այդպէս դատում են նրանք, որոնց անցեալ «յեղափոխական գործունէութեան գիծը որոշել են հին բէժիմի օխրաննիկները» («Եдинство»). այդպէս դատում են նըրանք, որոնց այժմեան «ինտերնացիօնալիստական» տետակէաը մշակուել ու որոշուել է գերմանական իմպերիալիստական շահերի օրինատացիայի կշռաչափով:

Ահա բօլշեվիկական կուսակցութեան անցեալի և ներկայի բնոյթակիծը:

Եւ այն պարօնները, որոնք վ'րփուըը բերաններին կուրծք էին ծեծում և պայքարում, իբր, համաշխարհային իմպերիալիզմի գէմ, վերջին հաշւով իրանք հանդիսացան սատարողներ ու աջակցողներ գերմանական իմպերիալիզմի յաղթական արշականքի: Ասացէք խնդրեմ, ինչ բան

«սուսական թերեկ»: Այն Մալինովսկին, որ երկար տարիներ եղել է ցարական բէժիմի ամենահանդրուն և փայլուն օխրաննիկը, որը ընտրուել է Դումա սոտիկանութեան յատուկ ջանքերով, որը Դումայում արտասանած իր նշանաւոր ծառերը նախ ցոյց է տուել սոտիկանական գեպարտամենտի վիրեկուր Բելցկուն և նրա կատարեալ հաւանութիւնը գուել, իսկ նրա այդ ճառերը համարուել են բօլշեվիկների աշքում շիկովիլներ: Եւ յանկարծ բօլշեվիկների «Բերեկի» գէմքը մերկանալուց յետոյ դառնումէ նա նոյն իսկ բօլշեվիկների աջում «տալանտլիւն հեօδոյ» («Правда»): Ահա Լենինի սիրեցեալ յեղափոխականը: sapienti sat...

կարող է աւելի հաճելի լինել և դիւրացնել թշնամու գործը, քան դաշնակիցների պառակտումն ու անցատումը՝ նըրանց բաժան-բաժան հարուածելու և յաղթելու համար։ Եւ տեսէք, թէ ինչպէս իր փառքի գագաթնակէտին հասած Վիլիմը ինքնազոհունակութեամբ շփում է բեխերը և մեջիստոփելեան քրքիջ արձակում իր ոտքերի տակ ընկած աւարի և կարմիր դրօշակի վրայ։ Նա լիախորժ ծիծաղով հեգնեց իր պրուսական «առիւծների» առաջ խառնիճաղանջ և երկչոտ ամբոխի նման փախուստի դիմող «յեղափոխական» զօրքին, անուանելով վերջինիս «Russische Banden», և ՚ի տես ձեղքուած ֆրօնտների (Տարնօպօլ և Ռիգա) զարհուրելի կատաստրօֆների՝ ցաքանում էր նա իր երկրի գեմօկրատների բերանները։ Իսկ ուսւ «համաշխարհա-խաղաղաստեղծ» յեղափոխականներին անուանում է նա «Russische Narren» («Ռուսական խենթեր»), առաջ քաշելով իր այն նպատակները, որոնց համար հանել է նա իր սուրը պատեանից։

Բօլշեվիկ կամենեվը՝ զինադադարի բանակցութիւններին մասնակցող պատգամաւորներից մէկը, կենարոնական գործադիր կօմիտէին ներկայացրած իր զեկուցման մէջ հաղորդում է, թէ որքան սառն ու անտարբեր ընդունելութիւն է ունեցել իրանց խաղաղութեան դեկարացիան գերմանացի գեներալների կողմից։ Բայց դա չի վըհատեցրել պկ. կամենեվին և իր ընկերներին, որովհետև նըրանք ի կատարածած են համարում «իրանց գլխաւոր նպատակը»։ Ո՞րն է այդ գլխաւոր նպատակը։ «Յայտարելով մեր գեկլարացիան, — ասում է պկ. կամենեվը, — մենք ցանկանում էինք համել այն բանին, որպէս զի ոչ միայն դաշնակից պետութիւնների դեմօկրատիան, այլև գերմանական ժողովրդական մասսաները իմանան և հասկանան, որ մենք եկել ենք Բրեստ ոչ թէ բացատրուելու

գերմանական զեներալների հետ, այլ նրա համար, որպէս զի զեներալների գլխի վրայից զիմենք գերմանական բանուրներին և որպէս զի նրանք միացնեն իրանց ձայնը մեր ձայնին՝ բոլոր ժողովրդներին համախմբելու ընդհանուր խաղաղութեան համար մղուելիք կուտի մէջ»։

Ամեն անգամ, երբ լսում կամ կարդում էք բօլշեվիկ իդէօգների կողմից այդպիսի դատողութիւններ, անխուսափելիօրէն հարց է ծագում ձեր մէջ. ովքէր են, վերջապէս, այդ պարոնները՝ ուսւ երկրի քաղաքականութեան մէջ. վերամբարձ իդէալիստներ են նրանք արդեօք, անուղելի բանդագուշողներ ու ֆանտազեօրներ, թէ ճարպիկ դմեց-ներ ու հոտառու լարախաղացներ են կամ ինչպէս գերմանացին կասէր նման դէպքում՝ listige Geschäftsmacherներ են։

Պ. կամենեվը կարծես զարմանքով հաղորդում է իր զեկուցման մէջ, որ յանձին իրանց և գերման զեներալների «ընդհարւում էին երկու հակադիր աշխարհահայեցքներ՝ չգանելով իրար հասկանալու ընդհանուր լեզու։ Միթէ, իրաւ, ուսւ սօցիալիստին ու յեղափոխականին նոր պիտի յայտնի լինէր, որ իրանք և գերմանական միլիտարիզմի ու իմպերիալիզմի պատենտաւոր նըրկայացուցիչները տարբեր աշխարհների մարդիկ են։ Այդ ի՞նչպէս եղաւ, որ կամենեվը և իր ընկեր բօլշեվիկները ներքին քաղաքականութեան մէջ անխուսիր կասկածի տակ առան բոլոր ուսւ կալուածատէրերի և կապիտալիստների ներկայացուցիչներին՝ անհսարին համարելով նրանց հետ բացատրուելու, իրար հասկանալու և կօալիցիօն ոյժերով պետական շինարար գործ կատարելու և այդ առիթով մեղադրեցին մենշեվիկներին ու էս-էլ-ներին՝ սրանց կօալիցիօն քաղաքականութեան համար (անուաններով նրանց «ծուրջազնութեան»), իսկ արտաքին քաղաքակա-

նութեան մէջ նոյն կամենեմիւրը միանդամայն հնարաւոր գտան իրանց ազատակամ նախաձեռնութեամբ ձեռք մեկնել գերման գեներալներին և բանակցել, բացատրուել նրանց հետ, խաղաղութիւն խնդրել նրանցից:

Ռուս բուրժուազիան, մանաւանդ սրա լիբերալ թիւը, ազատ երկրի և գեմօկրատական հասարակապետութեան քաղաքացիներ են, որոնց հետ ոօցիալիստն ու յեղափոխականը շատ աւելի առընչութեան կէտեր ունին, քան խոշոր ազնուական-իւնկերական ծագում ունեցող, մինչև ոսկորների ծուծը ըէակցիօնէր ու վիճելմապաշտ գերման գեներալն ու դիպլօնատը: Բայց տեսէք, իր երկրում անհաշտ անարխիստ, բուրժուատեաց և բուրժուա-վիճժինդիր լենինը յօժարական պատգամաւորներ է ուղարկել նոցին գերազանցութեանց օտար գեներալների ուաքը:

Դարձեալ միամիտների աշքերին թող փչելու համար ասուած կեղծ ու գատարկ զբոյցներ են կամենեվի այն խօսքերը, որ իրանց (պատգամ.) զլիսաւոր նպատակն եղել է իրանց խաղաղատենչ ձայնը լսելի դարձնել գերման բանւորութեան՝ գերման գեներալների զլիսի վրայից: Պ. Տրօցկու պաշտօնական դիմումը և վճռական յայտարարութիւնը սեպարատ զինադադար և ապա սեպարատ խաղաղութիւն կնքելու սպառնալիքի նկատմամբ, ինչպէս մենք տեսանք, գալիս է հիմնապէս հերքելու կամենեմիւրի յիշեալ կեղծ հաւասարիացումները: Բօլշեվիկները ուսւերկին ու յեղափոխութիւնը այնպէս են անձնատուր առել թշնամուն, և խաղաղութեան հարցում այնպիսի քաղաքականութեան դիմեցին, որ նրանք ինչ զնով էլ լինի պէտք է հասկանային գերման գեներալների աշխարհահայեցքն ու լեզուն:

Ահա այս է եղել ձեր զլիսաւոր նպատակը, պլ. կամենեվ: Ինչ վերաբեռում է ձեր բարձրակոչ ձայնին՝ զեր-

ման բանւորներին ողպուած, ապա նա չափազանց թոյլ ու անզօր է՝ նրանց հասցնելու և նրանց վրայ ազգելու համար: Ձեր սպասելիքներն ու կոչերը մարտ ամսից՝ ի վեր ձայն բարբառոյ յանապատի են մնացել. իսկ վերջին կոչը գտաւ սօցիալդեմօկրատիայի կենտրոնական օրգանի («Vorwärts») կողմից միայն կարուկ ու բացասական պատասխան:

Այն, հիմք ու իրաւունք ունի Վիլհելմը՝ գոռոգանալու:

Այն սեպարատ խաղաղութեան փորձը, ինչ չի յաջողուել անել իր դեպլօմատական մախինացիաներով և ամենուրեք ցանցած պատած իր լրտեսների ու ագենտների վոհմակի միջոցով հին Ռուսիայում՝ ունենալով իր կողմ գերմանօֆիլ բիւրօկրատների տիրող կուսակցութիւնը՝ նախկին կայսրունու և Բառապուտինի գլխաւորութեամբ, այդ նոյնը ինքնարերաբար յաջողուել է այժմ Վիլհելմին նոր Ռուսիայում՝ գերմանօֆիլ անարխիստների արկածախնդրական քաղաքականութեան միջոցով՝ լենինի և Տրօցկու զլիսաւորութիւնամբ:

Ի՞նչպէս չուրախանայ Հոհենցոլերնեան տոհմի գոռոզ ներկայացուցիչը այդ հաճելի սիւրպիզի հանդէպ:

Թող ինչ ուզում են ասեն, մեզ համար բոլոր կասկածներից վեր է, որ բօլշեվիկների կենտրոնական զեկագարները նոյնպիսի եղկելի գերմանօֆիլենց են*), ինչպէս

*) Մեզ այստեղ մազաշափ անգամ չեն հետաքրքրում այն մերկացումները, որոնք ուղղուել են մի շարք բօլշեվիկների դէմ, վերաբերով սրանց մութ գործեր, գաղտնի յարաբերութիւններ Գերմանիայի հետ և այնու Սխալ են թէ ձիշտ այդ մերկացումները, զա խուզարկու բաժանմունքի և դատարանի գործն է: Մենք բանակուում ենք բօլշեվիկների դէմ, որպէս որոշ հոսանքի ներկայացուցիչների, որոնց մասին շատ վաղուց, մերկացումներից աւելի վաղ, կազմել ենք մեր անշեղ կարծիքը: Նրանք եղել են Գեր-

գերմանօֆիլներ էին ընկած բիւրօկրատայի տխրահոչակ տիպերը։ Բօլշեվիկնենի գերմանասիրութիւնը արտայայտուեց նրանց քարոզութեան և գործունէութեան այն բաղմաթիւ գերմանաշահ լողունդների մէջ, որոնց միայն մի շատ չնշն մասի հետ մենք առայժմ ծանօթացանք։ Ամբողջ հարցը նրանց յայտարարած դիրքի և մշակած ու որոշած օրիենտացիայի մէջ է կայանում պատերազմի շուրջը. կուող երկրներից որ կօալիցիայի համար է վերին աստիճանին ձեռնետ և օգտակար լենինական հոսանքի մինչ այժմ եղած գործունէութիւնը և որ կօալիցիայի համար է վերին աստիճանի աննպատ և կործանարար այդ գործունէութիւնը։ Դնել հարցը, նշանակում է պատասխանել, այնքան պարզ է այն իր բովանդակութեամբ։ Մեր մինչ այժմեան դիտողութիւնները լուսաբանել են այդ հարցը շատ կողմերից։

Կամ մարդիկ, որոնք դաշնակից երկրների (Անգլիայի, Ֆրանսիայի և այլն) անբարեացակամ վերաբերմունքը դէպի լենինական հոսանքը բացատրում են նրանց երկիւդով և թշնամութեամբ հանդէալ այդ հոսանքի «ահազանդ» հնչող «սօցիալիստական ուրուականի»։ Եթէ այդպէս դատողները գիտակից խարեցաներ չեն, ապա նրանք երազական ինքնախարէութեամբ զբաղւող միամիտ երեխաներ են։ Նախ և առաջ մոռանում կամ անգիտանում են այդպէս դատողները, որ «սօցիալիստական ուրուականից» ամենամեծ շափով երկիւդ կրելու հիմք ու իրաւունք

մանիայի յաղթութեան կողմանակից ընդդէմ դաշնակիցների իսկ դա ուրիշ բան չէ նշանակում, բայց եթէ այն, որ նրանք եղել են գերմանական իմպերիալիզմի հաւատարմատարները կամ իդէական լակէյները,

կունենար յեղափոխութեան այնքան մեծ կարիք ունեցող սահմանակից և բէտակցիօնէր Գերմանիան և ոչ մի գէպքում արդէն ազատ, գեսօկրատիկ Անգլիան, Ֆրանսիան կամ Ամերիկան։ Երկրորդ՝ եթէ սօցիալիստական յեղափոխութեան և նրա «որուականի» գալուստը այդքան մօտ ու հաւանական համարուէր Ռուսիայի սահմաններից դուրս, ապա թող խորապէս հաւատացոծ վինեն բօլշեվիկները, որ ողջ իմպերիալիստ արտասահմանը՝ դաշնակիցները թէ թշնամիները, մոռանալով իրանց «ներիին հաշինները», կըմիանային «բօլշեվիկական սօցիալիզմը» ջախջախելու համար։ Հաւատացած եղէք, պարոնայք բօլշեվիկներ, որ դուք ոչ մի աջակցութիւն չէիք ստանայ այդ գէպքում ոչ բանւորական Ինտերնացիօնալից և ոչ զատ-զատ երկրների պրօլետարական գետօկրատիաների կողմից։ Դուք ձեր ըեպուտացիան վազուց էք ձգել, որպէս զի լոյս ունենալ կարողանաք երկրների կազմակերպուած գեմօկրատիայից։ Դուք, պարոններ, ձեր «պատերազմական» և «պացիֆիստական» քաղաքականութեան յայտնի ուղղութեամբ զոհարերեցիք բանւորական Ինտերնացիօնալի 12 անդամների (բոլոր դաշնակից պետութիւնների) կենսական շահերը յօդուտ գերմանական քառանդամ միաւպետական կօալիցիայի (առանց այլապէս սահնք՝ միայն Գերմանիայի) շահերին։ Դաշնակից երկրների գեմօկրատիաները, զբանց մէջ արիւնաքամ եղած Բելգիան, Սերբիան, Բուլղարիան և այլն, միայն խորին գարշանքով են նայում ձեզ զրայ, որովհետեւ յեղափոխութեան այն բարձր ծածանող կարմիր զրօշակը, որի վրայ սոկէ տառերով զրօշմուած է ժողովուրդների ազատագրութեան վեև գաղափարը, դուք ցեխուտեցիք այդ զրօշակը, նետեցիք եւրոպական արնախում բռնակալի ոտքերի տակ՝ և զրանով հարաւորութիւն տուիք նրան աւելի ամրացնելու

ժաղովրդներին և դասակարգերին ձնշող ու ստրկացնալ շղթաները*):

*) «Սօցիալիստական ողջ Խնտերնացիօնալլը — ամենայն իրաւումը գրում է «ԵԴԻՆСТՎՈ» (№ 185), — գէմ է Ռուսական Յեղափոխութեան պօզրութչիկներին (այսինքն բոլշևիկներին), որոնք հագել են «Բնտերնացիօնալիստների» շաղիներ գերմանական խուզարիու բաժանմունքից: Եւ ողջ բանաբական Խնտերնացիօնալը պարաւում է Լենին-Տրոցկու «արտաքին քաղաքականութիւնը», որպէս մատնութիւն և գաւաճանութիւն: Բնորոշն այն է, որ ոչ միայն հակագերմանական կօալիցիայի և չեղօք երկրների գեմօկրատիանելու հս զզուանքով ու գարշանքով երես զարձնում բօլշևիկական անարթիունինդիվիլիզմից, այլև գերմանական գեմօկրատիան: Բոլոր երկրների գեմօկրատիաներին ուղղուած բօլշևիկական մեթօդի թէօրիան, այն է՝ համաշխարհային պատերազմը վերջացնել ընդհանուր քարաքացիական պատերազմով երկրների ներսում, «Վօրվարտ»-ը (գերման. սօցիալգեոկրատիայի պաշտօնական օրգանը) անուանում է խելագարութիւն: «Պատրոզրակը կառավարող մարդիկ — գրում է «Վօրվարտ» — պէտք է լաւ իմանան և ոչ մի կասկած չօւնենան այն բանի մէջ, որ նրանց թէօրիան չի ընդունուի գերմանական ոչ մի սօցիալիստական խմբակի կողմից, որոնք երբեք է մատնելու լինեն համաշխարհային պատերազմը աւարտելու քարաքացիական պատերազմով երկրներսում»: («Վօրվարտ»-ի այդ խօսքերը բերում է «ԵԴԻՆՍՏՎՈ»-ի վերոցիշեալ համարը, քաղիով բօլշևիկական բխրօնի հաղորդագրութիւնից): Սա էր, իր հերթին, մի աւելորդ ապացոյց է, թէ ինչպիսի վճռականութեամբ է հրաժարում գերմանական գեմօկրատիան յեղափոխութիւնից արդի պայմաններում: Ի հարկէ, բօլշևիկները կարող են պարագ առարկութիւններ անել, որ իրանց յոյզը Շայդեմանի ֆրակցիան չէ, այլ ինքը պրօկտարական մասսան: Բայց թող լաւ իմանան այդպէս զատղութիւնը, որ 3—4 տարի շարունակ, պատերազմի սկզբից ՚ի վեր, նոյն Շայդեմանի ֆրակցիան է գեկավարել պրօկտարական քաղաքականութիւնը հրաժարակի վրայ և մինք չտեսանք երբէք, որ պրօկտարարիատը որի է ակտիւ քայլ աներ կուսակցութեան պայմանական օրգանների հակառակ: Թող մի անգամ ընդմիշտ ըմբօննեն ուու երկրի անարթիունինդիվիլիստները, որ իրանց գաւադրական և բունթարական քաղաքականութիւնը չի կարող ոչ մի կերպ նախարիպար օրինակ ծառայել եւ բոլովական պրօկտարական շարժման համար: Բօլշևիկական անարթիզմը — բէակցիա է նշանակում սօցիալիստական շարժման տհասկչամբ:

Հարցը պէտք է պարզ ու մեկն դնել. ով է ուժ խարում. կայզեր Վիլհելմը սօցիալիստ Լենինին, թէ սօցիալիստ Լենինը կայզեր Վիլհելմին:

Եթէ Վիլհելմի կառավարութիւնը ունենար որևէ զէթ աղօտ ակնածութիւն կամ մութ երկիւղ ուու «Քօլշեվիկական սօցիալիզմից», ապա նա, հաւատացած եղէք, այնպէս առօք փասօք և քնքոյշ խնամատարութեամբ ու բարեհայեցողութեամբ ճանապարհ չէր գնի Լենինին և սրա գաղափարակիցներին իր երկրի վրայից դէպի Ռուսիա: Հեշտ ասելու բանէ. ուու անմեղ ու խաղաղ ընակիչներին տարիներով քաղաքացիական գերութեան մէջ պահող թշնամին տանց այլեայլի ճանապարհ է տալիս իր երկրի վրայից ուու սօցիալիստներին ու անարթիստներին:

Ինչումն է ուրեմն գաղտնիքը:

Նրանում, որ լենինական ցան «ահարկու» սօցիալիզմը մի գատարկ հնչին է Վիլհելմի աչքում, մի «ուրիշական առաջարկ հնչին» է Վիլհելմի աշքում թանկացին նշանակութիւնը: («Վօրվարտ»-ի այդ խօսքերը բերում է «ԵԴԻՆՍՏՎՈ»-ի վերոցիշեալ համարը, քաղիով բօլշևիկական բխրօնի հաղորդագրութիւնից): Սա էր, իր հերթին, մի աւելորդ ապացոյց է, թէ ինչպիսի վճռականութեամբ է հրաժարում գերմանական գեմօկրատիան յեղափոխութիւնից արդի պայմաններում: Ի հարկէ, բօլշևիկները կարող են պարագ առարկութիւններ անել, որ իրանց յոյզը Շայդեմանի վրակցիան չէ, այլ ինքը պրօկտարական մասսան: Բայց թող լաւ իմանան այդպէս զատղութիւնը, որ 3—4 տարի շարունակ, պատերազմի սկզբից ՚ի վեր, նոյն Շայդեմանի ֆրակցիան է գեկավարել պրօկտարական քաղաքականութիւնը հրաժարակի վրայ և մինք չտեսանք երբէք, որ պրօկտարարիատը որի է ակտիւ քայլ աներ կուսակցութեան պայմանական օրգանների հակառակ: Թող մի անգամ ընդմիշտ ըմբօննեն ուու երկրի անարթիունինդիվիլիստները, որ իրանց գաւադրական և բունթարական քաղաքականութիւնը չի կարող ոչ մի կերպ նախարիպար օրինակ ծառայել եւ բոլովական պրօկտարական շարժման համար: Բօլշևիկական անարթիզմը — բէակցիա է նշանակում սօցիալիստական շարժման տհասկչամբ:

Ահա այդ արգիւնքները:

1. Լենինական-ցիմմերվալդիստական քաղաքականութիւնը բուռն արշաւած սկսեց դաշնակիցների դէմ և մեկուացրեց Ռուսիային: — Գերմանիան հէնց այդ եր փափագում տարիներից ՚ի վեր:

2. Բօլշևիկները իրանց «եղբայրացման» քարոզներով կազմարծեցին անկատ և ուու զօրքի պատերակական թշնակութիւնը հատարեցրին զերօյի: — դա մի փառա-

ւոր ծառայութիւն էր գերմանական գեներալ-շտաբի համար:

3. Բօլշեվիկները գրգուեցին մասն ժողովրդների սեպարաժիսական ախորժակը եւ մոր մասամբների սահմանակոծ բռնկումները ժամանակաւոր կառավարութեան դէմ.—գերմանական քաղաքագէտների համար հէնց այդ անարխիան էր անհրաժեշտ՝ հակառակորդ երկիրը յոշոտելու և ուժառապելու համար:

4. Բօլշեվիկները արինահեղ ապստամբութեամբ յափշտակելով քաղաքական իշխանութիւնը, յաղախցիանակ պատերազմի ծաւարող հրդեհի բռնկեցրին երկիրի ներսում և հսկայ պետութիւնը պատառ-պատառ լինելու դժոխային պարմաններ ստեղծեցին. — Ի՞նչ կարող էր աւելի հաճելի լինել յաղթանակող Գերիխնիայի համար, քան իր հակառակորդի արինակուայ տապալումը ներքին թշնամութիւններից:

5. Վերջապէս բօլշեվիկները փաստօրէն խօցեցին բոլոր կապերը դաշնակիցների հետ և սեպարաժ խաղաղործեան ձեռք մեկնեցին երկրի մէջ նստած ու հաստատուած թշնամուն. — Ի՞նչ քան կարող է աւելի հաճելի լինել յաղթութիւնների փառքով յղփացած և նուածումների հեռանկարներով արբեցած Բերլինի քաղաքագէտների համար, քան պարտուած Ռուսիայի անկորի անձնատուր լինելը կամ կապիտուլացիան:

Ահա ինչումն է գաղտնիքը: Ահա ով է ում խարում:

Թող չկայանայ սեպարատ խաղաղութիւնը. Ի՞նչ փոյթ Գերմանիայի համար: Այն մեծ ու կարեորազոյն ծառայութիւնը, որի կարիքն էր զգում Գերմանիան երկար ժամանակից՝ ի վեր, արուած է արգէն բօլշեվիկների կողմից մի քանի ամիսների ընթացքում և փայլուն յաջողութեամբ: Ռուսական մրուս ասածի գոյութիւնն

յունի գերմանական գեներալ-շտաբի համար և ոչ միայն իր գիրքերը պահելու համար մտահոգութեան կարիք չունի գերմանական զօրաբանակը, այլև ցանկացած դէպում՝ առանց գիմագրութեան ու գժուալութեան, կարող է նրա զէնքը հատանել, որքան ուզենայ: Եթէ Վիլհելմի կառավարութիւնը միլիարդներ ծախսէր և ցանցածև պատէր ողջ Ռուսիան իր հարազատ գերմանական լրտեսներով ու ագենտներով, վերջիններս չէին կարող գերմանական իմպերիալիզմին մատուցանել այն փառահեղ ծառայութիւնը, ինչ մատուցել են նրան ուսւ բօլշեվիկները:

Sapientis sat...

Զգում, զիտակցում են արգեօք լենին: Ու ընկ., թէ ում համար և ինչու համար են անում նրանք այդ ինքնակործան և ինքնասպան ծառայութիւնը: Մենք չենք ուզում թափանցել նրանց սուբիեկտիւնոգեկան աշխարհի խորքը...

Յամենայն գէպս մի քան պարզ է ամենայն ակներկութեամբ: Այդ այն է, որ Գերմանիայի «հին բարեկամները» ցարական Ռուսիայում երբէք չէին արել և չէին կարող մնել պատերազմի 2½ տարուայ ընթացքում յօգուտ Գերմանիայի այն, ինչ արեցին նրա «նոր բարեկամները» յեղափոխական Ռուսիայում վերջին 8—9 ամսուայ ընթացքում*): Սա արտասոց փաստ է, որի գոյութիւնը չէ կարող ժխտել և ոչ մի «ուղղափառ» բօլշեվիկ:

*.) Բերլինի այն բէտակցիօնէր օրգանները, որոնք ուսւ հին բէժիմի օրով հրձուանքով զրում էին. «Die junge Zarin und die Hofergarde denken und sind tätig immer für uns» («Երիխասարդ կայսրութիւն և պալտասակ. կուսակցութիւնը շարունակ մտածում և զործում են մեզ համար»), նոյն օրգանները աւելի մեծ հրձուանքով արձանագրում էին բօլշեվիկների գործունէութեան փայլուն յաջողութիւնը, համոզուած լինելով, որ բօլշեվիկների յաղթութիւնը կողմէի ներսում, զա գերմանական յաղթութիւն է նշանակում առերկը ներսում, զա գերմանական յաղթութիւն է նշանակում առհասարակ Ռուսիայի գէմ: Նրանք չեն սխալուել և նրանց հրձուան-

Եւ այստեղ նորից ցցւում է անիծուած հարցը: Զէսոր պատմութեան առաջ ցարական բիւրօկրատների զերմանասիրութիւնը կարող է գտնել իր արդարացումը՝ ելնելով մօնարխիզմի, ոռւսական բէակցիայի՝ ապահովութեան և դասային լիարտօն տիրապետութեան շահերի

ըը հասել է այժմ օփացիաների բօլեվիկների հասցէին: —Միջազգային պրօլետարախափի խոշորագոյն վետերաննը՝ Աւգուստ Բերելը, մի այսպիսի իմաստում միտք է յայտնել և յաճախ, առիթ լինելուց, կրկնում էր նա: Երբ մեր զաղափարացին հակառակորդները ուրախանում և գովում են իմ կամ իմ կուսակցութեան որևէ քայլը, ևս միշտ հարց եմ տալիս ինձ «ով Աւգուստ, չինի՞ սխալ ես գործել և այդ սխալ նպաստաւոր է միայն թշնամուն»: Հակառակորդի ամեն մի գովեստը, առում է Բերելը, ստիպում է ինձ վերաքննել զործած քայլս, իսկ նրա ամեն մի յարձակում և քննազուտթիւն համոզում են ինձ զործած քայլի ճշտութեան մէջ: Համեմատեցէք մեր մեծ վիտերանի այդ նսխազգուշացնող ոսկի խորերը լենինի բռնած գիրքի և յայտարարած տակտիկայի հետ: Ողջ բէակցիօն և իմպերիալիստ Գերմանիայի հրճուանքն ու զովեստները ոչ միայն չեն գցուշացնում և չեն խանգարում լենինի և Տրոցիկու քունը, այլև, կարծես, աւելի են իրախուսում նրանց զործունէութիւնը մէջ: Գերմանական իմպերիալիստների օփացիաներին առանձին հաճոյքով միացրին իրանց զովեստները թիւրք պանխալամբիստները Պօլում, որովհետև պ. լենինը ապրատարբութեան կոչ է ուղղել արևելքի բոլոր մուսուլմանների հասցէին: Այն, ինչ Բերլինի և Պօլուի կարինեանների բուն տեխնաքըն է կազմել զեռ պատերազմի միլլիցից՝ սրբազն պատերազմի անունով սոքի կանգնեցնել ողջ մահմեկական աշխարհը, որպէս զի զրանով կարելի լինի հարուածել երկու ախուժեանների Անզիային և Խուսիային արեկերում, այժմ այդ տեխնաքն էլ կրկնեց պ. լենինը սուսական յեղափոխութեան անունով: Եւ տեսէք, թէ ինչպէս պ. լենինը իր կոչի մէջ սիրով թութակում է Անզիայի հասցէին ուղղած այն էպիտետները՝ «ազահ յափշտակիչներ և կողապտիչներ»՝ որոնցով գերմանացիք (զեն, Բերնհարդի, Ռոհրախ և այլն) զարգարել են միշտ իրանց իմպերիալիստական ժարդնը Անզիայի մասին: Լենինը կարծում է, որ իր կոչով յեղափոխական-պատմական մեծ քաջազործութիւն է կատարում: Իսկ մենք կարծում ենք, որ նա զրանով աւելի շուտ անփառուակ մի զեր է սուսական յեղափոխութեան շինքին փաթմաթում է աղախնու մի ծառայութիւն յօդուտ գերմանական իմպերիալիզմի:

տեսակէտից, որոնց ամենահզօր պաշտպանը համարուել է միշտ պրուս-պերմանական բէակցիան: Բայց արդարացման բնութիւնը հիմք կարող է ունենալ պատմութեան անեղ գատաստանի առաջ այն բօլեվիկների զերմանաշահ ծառայութիւնը, որոնք գործում են հրապարակի վրայ սօցիալիզմի, ինտերնացիօնալիզմի և զեմօկրատիզմի անունով, որովհետև ժամանակակից պաշտօնական Գերմանիան հանդիսանում է ողջ Եւրոպայում պրօլետարիատի գատակարգային իդէալի ամենաահաւոր և ամենաերդուեալ թշնամին:

Լուծիր գու այս անիծեալ կնճիոր, ով էդիպոս:

VII.

Եթէ մեր բոլոր քննական զիտողութիւնները համառու ամփոփենք բէպիմէի ձեռով, կստանաք նետենեալը.

1. Բօլեվիկների պահանջը՝ երկրի իշխանութիւնը տալ խորհուրդների ձեռքը, միշտ և վճռականապէս մերժուել է համառուսական գեմօկրատախայի բացարձակ մեծամասութեան կողմից՝ յաձնին բոլոր Բան., Զին. և Գիւղաց. պատգամ. խորհուրդների ընդհանուր համարումարների:

2. Բօլեվիկական ֆրակցիան գաղափարապէս և բարյապէս միշտ տապալուելով իր խաղաղ քաղաքականութեան ընթացքում, զիմեց ազատ ու գեմօկրատիկ երկրի յարաբերութիւնների համար բացարձակ անթոյլադրելի և ոճրագործական քաղաքականութեան, այն է արիւնահեղ ապստամբութեան, և հակառակ համառուսական զեմօկրատախայի կամքի՝ յափշտակեց քաղաքական իշխանութիւնը և յայտարարեց բօլեվիկական զիկտատուրա:

3. Հակառակ իրանց խարուսիկ խառութերի՝ «հաց, ազատութիւն և խաղաղութիւն», բօլեվիկները, ինչպէս և պէտք է սպասուէր, վերջին ծայր քայլքայեցին պետական գաղափարապէս և աղախնութիւնը կամքի աղախնութիւնը:

կան և տնտեսական կեանքի ֆունկցիաները, պարենաւորման աղբիւրները, աւելի ուժեղացրին սովի ու քաղցի աստիճանը: Ժանդարմիական ճնշումներով բռնացան նրանք ազատ մաքի ու խօսքի, անձի ու մամուլի, կուսակցութիւնների և գետօկրատական հաստատութիւնների (դումաների) դէմ: Թշնամու հետ «Եղբայրացում» քարոզով բոլշեվիկները ծաւալեցին նմանը չեղած քաղաքացիական կազմակերպուած - եղբայրասպան մի պատերազմ՝ երկրի կենտրոնում ու ծայրերում զօրքը զօրքի դէմ, բանուորութիւնը բանուորութեան դէմ, գետօկրատիան գեմօկրատիայի դէմ զրգուելով ու լարելով:

4. Այն բոլշեվիկները, որոնք օպօզիցիայի մէջ եղած ժամանակ բարձրածայն յայտարարում էին ժողովուրդների և ծայրերկրների հենքորոշումի, զրգուելով և խրախուսելով մանր ազգութիւնների սեպարատիստական ախորժակները ժամանակաւոր կառավարութեան դէմ, որպէս զի դրանով աւելի ուժեղանար անարխիան, այժմ, քաղաքական իշխանութեան համնելուց յետոյ, երբ նրանց տիրապետութիւնը չճանաչող ծայրերը (Սիբիրը, Ռուկրայնը, Դոնի շրջանը, Հիւսիսային կովկասը, Անդրկովակասը և այլն) ինքնորոշուել են արդէն իրանց տեղական առանձին—հակարօլեվիկական—կառավարութիւններով, այժմ նոյն բոլշեվիկները ոտնձգութիւններ են յարուցանում և ինսարիդներ սարքում ժողովուրդների և ծայրերկրների դէմ, բըռնազրօսիկօրէն զօրքեր ուղարկելով և կօմիսարներ նշանակելով կենտրոնից և դրանով աւելի տարածում եղբայրասպան կորին ու քաղաքացիական արիւնահեղ ընդհանումները, աւելի վատթարացնում երկրի ողբերգական վիճակը: Յենուելով ֆիզիքական կոպիտ ոյժի վրայ, բոլշեվիկները բռնահում են Տեղական ազգարնակութեան ընդհանրանութեան կամքի դէմ, աշխատականութեան վագագութեան:

բանց շմինքին չցանկացած մի վարչաձև, ու մի նորելուկ կուրս է ցարի ոստիկանական-ժանդարմիական քաղաքականութեան:

5. Այն բոլշեվիկները, որոնք առաջ, բանաւոր ու զրաւոր ազգային շարունակ զրգուում էին մասսաներին ժամանակաւոր կառավարութեան դէմ, ասելով, որ նա զիտմամբ է ձգձգում Հիմնադիր Ժողովի գումարումը և չի ուզում առնասարակ գումարել այն, այժմ նոյն բոլշեվիկները յափշտակելով կառավարութիւնը իրանց ձեռքը, ոչ միայն չզումարեցին Հիմնադիր Ժողովը որոշեալ ժամանակին, այլև իրանք են իսկապէս, որ դիսմամբ ձգձգում են նրա գումարումը, ձերքակարաւ են նրա իրանց համար անցանկալի անդամներին, սպանեալ են նրա զերազոյն կամքի դէմ և լենինական քմահան դեկրեաներով յանդզնում են պետական այնպիսի ծանրակշիռ հարցեր «լուծել», որոնց անօրինումը բացառապէս վերապահուած է Հիմնադիր Ժողովի—ուսու երկրի այդ լիազօր Տիրոց—կամքին:

Պետրօզրագի և Մոսկուայի քաղաքային Դումաները բռնի արձակելու վասար արդարացնում էին բոլշեվիկները նրանով, որ նրանց կազմը այլև չի համապատասխանում մասսաների նոր տրամադրութիւններին (նոկաեմբերեան «յեղաշրջումից» յետոյ), ուստի հարկաւոր են նոր ընտրութիւններ: Այդ դատողութիւնը, անշուշտ, չափազանց շինծու և բռնազրօսիկ է՝ բղանդրած ֆիզիքական կոպիտ ոյժի «լօգիկայից», որովհետեւ գեմօկրատական հիմնքերով ընտրուած մի համայնական հաստատութիւն կարող է ընտրող ժողովը նոյն գեմօկրատական եղանակով և ազատ կամքով տեղի տալ մի այլ կազմի, բայց ոչ թէ զէնքի ոյժով բռնանալ հին կազմի դէմ և նոյն զէնքի ոյժով նոր «Դումա ընտրել» տալ:

Սակայն այդ կէտում ևս մի բովէ ներողամիտ լինենք և օրինական համարենք բօշեվիկական դատելակերպը: Արքան նրանք իրանց իսկ այդ դատելակերպով հետևողական են Հիմնադիր ժողովի հարցում: Սրա ընտրութիւնները, ինչպէս յայտնի է, մեծագոյն մասով տեղի են ունեցել բօշեվիկական տիրապետութեան օրով, այսինքն «մասսաների նոր տրամադրութիւնների» շրջանում: Հետևապէս պատգամաւոր. ինչ կազմ որ տալիս են այդ ընտրութիւնները, դա անմիջական արդինք է նոր տրամադրութիւնների, դա յուսակ հայելին է ժողովրդական ցանկութիւնների ու կամքի, դա երկրի հարազատ, յիշեծուած ձայնն է: Թուում է; որ բօշեվիկները այս ոչ մի առարկութեան տեղ ու առիթ ունենալ չեն կարող դէպի մի այնպիսի հաստատութիւն, որը ամեն մի ազատազրւող ու յեղափոխող ժողովրդի սրբութեան սրբոցն է համարւում:

Բայց աեսէք, նոյն իսկ այդ հարցում Լենին-Տրոցիկու բօշեվիզմը զիմակաւորուած է եղել մինչև այժմ: Օպօզիցիայի ժամանակ մասսաներ խարելու համար նրանց օրգաններն ու հոետորները փրփուրը բերաններին երդւում էին Հիմնադիր ժողովի անունով, պաշտպան հանդիսանում նրան՝ իբր հակայեղափոխական ոյժերի դէմ և նրա շուտափոյթ գումարումը նախաւոր զանում միայն խորհուրդների կառավարութեան միջոցով: Իսկ այժմ այդ հարցում ևս պատուել է բօշեվիկ քաղաքագէտների կեղծ դիմակը և մերկացրել նրանց հրէշային դիտաւորութիւնները: Ժողովրդի անունից խօսող այդ խարերաները յանդրդնում են ձեռք բաձրացնել 180 միլիօն ազգաբնակութեան արտայայտած կամիշի դեմ: Նրանք դէնքի բանութեամբ քշեցին Հիմնադիր ժողովի մասնաւոր խորհրդակցութիւնը, այժմ մահափոք են պատրաստում ամբողջ Հիմնադիր ժողովի դէմ:

«Երանք—ճիշտ նկատում է Մ. Գորկու «Խօսա Հիզն» թերթը, (նոյեմբերի 30-ի համարում), բօշեվիկների այդ երէկուայ ջերմ պաշտպանը—դաւագիր պլան են կազմել մաս-մաս քշել Հիմնադիր ժողովը: Սկզբում կարելի է կաղեաններին յայտարարել ժողովրդի թշնամին, ապա, եթէ հարկ լինի, աշակերմեան սոցիլիսաններին, յետոյ չափաւոր սոցիալիստներին, մինչև այն աստիճան, որ Հիմնադիր ժողովում մասն բօշեվիկները և նրանց զինակիր ձախակողմեան էս-էր-ները: Ոչինչ, բաւական սրամիտ պլան է: Բայց արդեօք, այդ պլանի հեղինակները չափազանց մեծ յոյսեր չեն դնում բանւորների և զինուորների խաբուածութեան և միամատութեան վրայ»:

Չի սխալւում Մ. Գորկու թերթը բօշեվիկների դիտաւորութիւնների նկատմամբ: Կենարոնական գործադիր կօմիտէի նիստին, երբ ձախակողմեան սոց.-յեղ. Շտայնբերգը հարցապնդում է ուղղում «ժողովրդական կօմիտարներին» սրանց բանած թշնամական զիրքի առիթով ընդդէմ Հիմնադիր ժողովի, Լենինը պատասխանում է ոչ տեղ և ոչ պակաս, բայց եթէ հետևեալը. «բօշեվիկները ընդդէմ չեն Հիմնադիր ժողովին, այլ միայն դէմ են այնպիսի Հիմնադիր ժողովի, որի կազմը և գործնէութեան շրջանը բաղկացած կլինի կաղեաններից և պաշտպանողական բլոկից (օборончесկий ծուռք, զրանով մասնանշում է Լենինը մենշևիկներին և էս-էր-ներին): Այդպիսի Հիմնադիր ժողովը, ասում է Լենինը, մենք թոյլ տալ չեն կարող»:

Այդպէս ուրեմն, թոյլ լինի Հիմնադիր ժողովը, բայց առանց բօշեվիզմի մահացու թշնամինների կաղեանների և յեղափոխ.-զեմօկրատիայի պատկառելի թերթի, մասնակցութեան: Թոյլ լինի Հիմնադիր ժողովը, բայց բաղկացած բօշեվիկներից և նրանց կոյլ գործիքներից: Ահա միայն

այդպիսի Հիմնագիր Ժողովը հաճելի կլինի ոռւս յեղափոխութեան ամենամեծ գերեզմանափորին, որը «Ժողովրդական կօմիսարի» անուանտակ ծածկուած, թքում է ամեն քայլափոխան ժողովրդական կամքի ու ինաւունքի վրայ, որը ձգուում է, ինչպէս «Դեն» թերթն է ճիշտ նկատում, Հիմնագիր ժողովից Բուլըգինի թուժա դարձնել:

Ինչով է տարբերուում Լենինի դատելակերպը ցարի սատրալների վերաբերմունքից, որոնք արձակուում էին Պետական Դումաները, պատճառաբանելով, որ նրանք բաղկացած են կրամուներից, պետութան և նարենիքի թրշնամիներից, կամ ձերբակալում էին սօցիալիստ պատգամաւորներին կամ ֆրակցիաներին, բարդելով նրանց վրայ շնծու մեղքեր:

Վախենալով պատասխանաւութիւնից ժողովրդական Բարձր Ստեամսի առաջ, երկիւղ ունենալով ժողովրդի ընտրեալների ահեղ դատաստանից, ոռւսական յեղափոխութեան շարլատանները մէջքից կէս են լինում և ձբդում են կեղծել եղլրի ծայլու Հիմնագիր ժողովում: Դա արդէն յեղափոխական բօլշևիզմ չէ, այլ «Ժանդարմիական բօլշևիզմ», ինչպէս որակել է իր կուսակիցներին վրացի բօլշևիկ Զուկելին ծայրերկրային խորհրդի ընդհանուր նիստին (աես «Голосъ Краевого Собрания» 9-ին գեկտեմ. № 141): Միանգամայն ճիշտ է. արդի բօլշևիզմը մի կարմրազգեստ ժանդարմերիա է, որի արարքների առաջ նսեմանում են նախկին սևազգեստ ժանդամիերիայի սիրազործութիւնները: Լենին-Տրոցկու կառավարութիւնը յեշեցնում է երիտասարդ թիւրքերի կառավարութիւնը, որոնք սուլթանական դեսպոտիզմը փոխարինեցին «Միութեան և Առաջադ. Կօմիտէի» գիլտատուրայով: Լենինի բռնութիւնների և կամայականութիւնների շկոլայում կարող էին աշակերտել ոչ միայն էնվեր փաշան, այլև Ստոլըգինը:

6. Այն բօլշևիկները, որոնք հին բէժիմի օրով ցանկանում էին Ռուսիայի պարտութիւնը՝ Գերմանիայի յաղթութեան գնով, որպէս զի հնարաւոր լինէր յեղափոխութեան բռնկում և ցարիզմի տապալումը, այդ նոյն բօլշևիկները հակասեցին իրանց սկզբնական տեսակետին և սուսական յեղափոխութիւնից յետոյ ոչ պաշտպանեցին Գերմանիայի պարտութեան ցանկալիութիւնը, որպէս զի այստեղ ևս հնարաւոր լինէր յեղափոխութիւնը և ոչ էլ կանգնեցին ոռւս ազատ ու գեմօկրատիկ երկրի պաշտպանութեան (օборончествո) տեսակէտի վրայ՝ բէտկցիօն Գերմանիայի առաջխաղացումների հանդէպ:

7. Այն բօլշևիկներիը, որոնք առաջ ամեն կերպ հաւաստիացնում էին, որ իրանք հակառակ են Ռուսաստանի սեպարատ խաղաղութեան և ցանկանում են ընդհանուր, արդարացի և գեմօկրատական խաղաղութիւն բոլոր երկրների հետ, այժմ այդ նոյն պարոնները Ռուսաստանի անունից ապօրինաբար և անպատճառապատճառ կերպով սեպարատ զինադադար են յայտարարել իրանց բարեկամների հետ և պատրաստում են սեպարատ հաշտութիւն կնքել: Սեպարատ խաղաղութիւնը՝ բօլշևիկների ձեռքով, կնքել: Սեպարատ խաղաղութիւնը՝ բօլշևիկների ժեռքով, ուրիշ բան չէ, բայց եթէ նախկին կայսրունու, Շասպուտինի, Սուլիմովինովի, Շտիւրմերի և ցարական այլ հայրենադաւ բէտկցիօն վոհմակների խալախանութեան յադրանակ ընդգիւմադիր և առաջադէմ Խուսիայի հասարակագետութիւնը պատմական, սկզբունքային և բարոյական ոճրագործութիւն ու դաւաճանութիւն է եւրոպական և ամերիկական գեմօկրատիատանութիւն է եւրոպական և ամերիկական դիականի գէմ: Առաջադ. կնքել նուիրական-կենսական շահերի և նրա ապագայ սերնդի գէմ: Եւ իբրև այդպիսին սեպարատ խաղաղութիւնը՝ միապետական Գերմանիայի բէտկցիօն

կառավարութեան հետ, աններելի ծանր վիրաւորանք է յեղափոխական Ռուսիայի արժանապատութեան դէմ:

Ահա ինչի են ընդունակ բօլշեվիկները:

8. Վերջապէս այն բօլշեվիկները, որոնք ամիսներ շարունակ յորորտում էին, որ իրանք միայն գերմանական ժողովրդի հետ կարող կլինին խաղաղութիւն կնքել՝ իմպերիալիստների կառավարութեան գլխի վրայից եզրայրական ձեռք մեկնելով թիկունքում յեղափոխութիւն առաջ բերող ժողովրդին. Նրանք, որոնք չեին ցանկանում նոյն իւկ գերման պրօլետարիատի մեծադրյն մասը ներկայացնող սոցիալդեմոկրատական կուսակցութեան (Շայրեմանի Փրակցիան) ներկայացուցիչների հետ խաղաղութեան ըանակցութիւններ վարել համարելով նրանց իմպերիալիստներին վաճառուած սոցիալիստներ, այժմ նոյն այդ պարունայք բօլշեվիկներն են, որոնք փիզները ճկած ուստի գամաւուրներ են ուղարկում անմիջապէս իմպերիալիստների և միլիտարիստների, կապիտալիստների և խոշոր կալուածատէրեր՝ իւնկերների հզօր կայզերի ծառաների մօտ և նրանց սեղանից խաղաղութեան պայմանների փշրաքներ են մուրում: Դա լակէյական ստորաքարշութիւն է, զածանք վիրաւորանք ու դաւաճանութիւն է ուու. Մեծ Յեղափոխութեան դէմ, երբ նրա կարմիր դրօշակը, երբ ուու ազատ դեմոկրատիկ երկիրը իբրև մի անտէր աւարձում են եւրոպական ամենավատատիպ և ամենազարշելի գեսպոտի ոտքերի տակ:

Ահա ինչ օրի ձգեցին ուու գժբախտ երկիրը Գերմանիայի «նոր բարեկամները»:

Ահա խարուսիկ խօսքերի և իսկական, աւելի շործ գործերի քառային հակասութիւնները տիրահոչտկ բօլշեվիզմի:

Ահա դիմակաւորուած ասպետների մերկացած դէմքերը՝ իրանց անյատակ եղկելիութեամբ ու ցինիզմով:

Բայց ինչ փոյթ այդ բոլորը Լենին-Տրոցկի դիկտատորների համար Նրանք ծափ բռնած կեկ-վոկ են պարում համառուս յոշուառուած պետութեան կիսակենդան դիակի վրայ: Նրանք «հայրենազուրկ վտարանդիներ» են, գերմանական ճիշտ արտայայտութեամբ^{*)} («Vaterlandslose Gesellen^{*}»), — անապատի մէջ գեգերող ու զառանցող գերվիշներ, որոնք պատրաստ են բոլոր բէալ արժէքներն ու սրբութիւնները զրհաբերելու, բոլորի կեանքերն ու գոյութիւնները խորտակելու, միայն թէ կեցցէ արտարակտ ֆօրմուլան, կեցցէ անարխիստական աւերիչ ֆանատիզմը և սնամէջ տօկտրինան:

Լենինի համար զօրքնու պլութարխատր — հասարակ նիւթեր են միայն՝ սոցիալական փորցերի, էքսպերիմենտների համար, ինչպէս ճիշտ նկատել է Մաքսիմ Գորկին: Լենինական «գեկրետները» եւ բօլշեվիկական «սոցիալիզմը» տքնում են նրանք իրականացնել կոպիտ ոյժի, սուխնների միջոցով^{**}): Բայց Լենին - Տրոցկու համար

*) Բերելը ծանր վիրաւորանք էր համարում այդ արտայայտութիւնը՝ ուզզած իր կուսակցութեան դէմ նացիօնալիստների կողմից: Իսկ այսպէս կողուած «սոցիալդեմոկրատ» լինինականները պարծենում են «հայրենազուրկ վտարանդիներ» լինինու մակդիրներով:

**) Հետաքրքրական դրուիներից մէկն է կազմում բօլշեվիկական «սոցիալիզմը»: Մենք մի առանձին տեղ մանրամասն կրիստոնք այն գաւեշտական միջոցների և փորցերի մասին, որոնցով ձգուում են բօլշեվիկները «սոցիալիստական կարգեր» պատուատել մեր երկրում: Նկատենք առ այժմ այսքանը, որ լինինական այդ ուղղութեամբ ունեցած մտածելակերպը ոչ միայն կապ ու առնչութիւն չունի գիտական սոցիալիզմի հետ, այն ուղղակի հակասութիւնական և հակամարքսիստական է: Բօլշեվիզմի յազմանակը՝ ուուսական մարքսիզմի անկումն ու վարկարեկումն է նշանակում:

Նոյնքան հասարակ նիւթեր ու իրեր են — երկիրն պետութիւնը, հայրենիքն ու ժողովուրդը՝ որոնց նրանք հրապարակ են նետել ամենախայտառակ աճուրդի ձևով՝ արտաքին զիշափախների խմբերի ալիսական էքսպերիմեների համար:

Դա արդէն յեղափոխական կառավարութեան քաղաքականութիւն չէ, այլ յեղափոխութեան շարլատանների լարախաղացութիւն:

Պատմութեան այն յաւիտենական նախատինքը, որից զերծ մեաց մեր դժբախտ երկիրը նոյն խոկ ցարական կառավարութեան օրով, այժմ, բօլշեվիկական տիրապետութեան շրջանում, գալարւում է երկիրը հոգեվարքի ձիրաններում՝ նախատինքի գրօշմը ձական:

Թող յարութիւն առնէ համառուս ժողովրդների առողջ բանականութիւնը:

Թող բանւորական եւ զինւորական մասսաները ըմբռնեն իրանց խաբուած վիճակի ամբողջ ողբերգութիւնը:

Թող սօցիալիզմի և յեղափոխութեան իսկական ներկայացուցութիւնը՝ այն դեմօկրատական տարերը, որոնք կառավարել են երկիրը կամ համակիր են եղել այդ օրինակ կառավարելուն մինչեւ հոկտեմբերեան դաւագիր ապստամբութիւնը, ճիզ թափեն ամեն կերպ թօֆափելու համար բօլշեվիկական լուծը:

Ցարական բռնի բէակցիան խորտակող դեմօկրատիան պէտք է որ ոյժ ու կենսունակութիւն ունենայ բօլշեվիկական վատթարագոյն անարխիան և անլուր բռնութիւնների «նոր սփառեմը» ևս տապարելու:

Ցարիզմ, կայզերիզմ և բօլշեվիզմ — զբանք հաւասար թշնամիներ են ուսւ երկրի ազատութեան, դեմօկրատիայի և սօցիալիզմի համար.

Մենք նախագլուծ ենք, որ զրգոյիս կարդացող ընթերցողները հաւանօրէն պիտի մի հիմնական բաց գտնեն նրա մէջ. ինչի՞ մէջ որոնել արդեօք բօլշեվիկների մասսայական յաջողութեան գաղտնիքը:

Այդ ըստ ինքիան շատ կարեւր հարցը մենք չենք շօշափել զրգոյիս մէջ: Զենք շօշափել ոչ թէ մոռացմամբ կամ մի այլ թիւրիմացութեամբ, այլ յատուկ դիտաւորութեամբ:

Որպէս զի կօնկրետ և համոզեցուցիչ լինի որևէ հոսանքի գտած յաջողութեան փաստի բացատրութիւնը, անհրաժեշտ է ամենից առաջ քննական վերլուծութեամբ պարզել այն հասարակական միջավայրի ուրոյն պայմանները, որոնց ծոցում արտայացուել, ծաւալուել և իր «գործնական արդիւնքներն» է ունեցել տուեալ հոսանքը: Խոկ այդ աշխատանքը մի առանձին թեմայի յատուկ գըլուխ է, որ չեր մանում մեր ներկայ զրգոյիի բովանդակութեան մէջ: Դրա մասին — մի այլ ուեղ և մի այլ տիպամ:

Սակայն դա չի խանգարում, որ հէնց այսուեղ վերոյիշեալ հարցի մասին երկու խօսքով նկատենք հետեւեալը:

Եթէ բօլշեվիզմը, որպէս կուսակցական կեանքում իր որոշ անցեալն ունեցած գաղափարային հոսանք, գոյութիւն չունենար մինչեւ մեր օրերի յեղափոխութիւնը, ապա մինոյն է, վերջնիս ընթացքում ծնունդ կապնէր և գործնէութեան ճիւղեր կարձակէր բօլշեվիզման մի հասանք: Արդի բօլշեվիզմը, անկախ իր «սօցիալիստական» (ուզում էինք ասել անարխօս-սփնդիկալիստական) ընդհանուր տենդենցներից, ունի գործնական լօգունդների և պրիօնների մի անազին տարափ, որոնք արդիւնք են և յաբարեցրուած ուսւ իրականութեան սպեցիֆիկ այլանդակու-

թեան: Այդ շափով բօլշեվիկմի նորագոյն էտապը այլ բան չէ, բայց եթէ սուսական մասսաներին յատուկ տարամերժ ձգտումների, ապստամք կրքերի և անյագուրդ բնագդների քայքայիչ անիշխանական բռնկումների տարերային շարժում՝ գեմագողիական պրիօններով հազըրած «ուսմունքի» ֆօրմուլայի մէջ: Ուրիշ խօսքով, բօլշեվիզմը, դա՝ տնտեսակուլտուրապէս յետընկած ուսու երկրի քաղաքացիականօրէն անդիսցիպլին մասսաների սօցիալ-հոգեբանական վատոյժ և հակաշինարար յատկութիւնների գաղափարայնացումը կամ թէօրիականացումն է նշանակում:

Հետո այդ պատճառով էլ բօլշեվիզմը կրում է իր մէջ իր գործնական յաջողութեան սաղմերը սկզբից և եթ: Բօլշեվիկները չեն կրթում ու դաստիարակում մասսաներին գաղափարների և սկզբունքների հանրարժէք դպրոցում, որի համար նրանք պիտի միաժամանակ պայքարէն մասսայական նախապաշարմունքների, տղիտութեան, վլասակար հակումների և գուեհիկ ինստինկտների դէմ և դրանով բնականօրէն սաւցնէին իրանցից շատերին: Ընդհակառակը, նրանք խրախուսում և աւելի են գրգռում այդ ըստինքեան բացասական յատկութիւնները վերջիններիս պաշտպանութեան արգումենտները հազըրում են իդէօլոգիական ձևերի մէջ:

Սակայն եթէ բօլշեվիկների այդօրինակ քաղաքականութիւնը ժապառում է նրանց յաջողութիւն և ժամանակաւորապէս կուսակցական յաղթութեան դափնիներ է պատրաստում, ապա նրանց այդ յաջողութիւնն ու յաղթութիւնը անխուսափելիօրէն կրում են մասսաների դասակարգային պարտութեան ու անկման բոլոր շանսերն ու տեսնդենցները: Սօցիալիստորէն կրթուած գիտակից բանւորութիւնը պիտի լաւ ըմբռնէ մի անգամ ընդ միշտ,

որ գրուպպայական էղօիզմ շոյող ու իւղող բօլշեվիկական քաղաքականութիւնը չունի ոչինչ ընդհանուր ու յարակից պրօլետարիատի պատմականօրէն հասկացուծ շահերի և դիտականօրէն հիմնաւորուած ձգտումների հետ:

Ահա այդ պատճառով, կրկնում ենք, բօլշեվիկների կուսակցութեան յաղթութիւնը նշանակում է՝ իր ուղղակի և հարազատ իմաստով, պրօլետարիատի դաստիարակային պարդային պարտութիւն և հասարակական ու ակացիալիզմի դէմ:

Կապրենք և կտեսնենք բօլշեվիկական աւանտիրացի այդ ախուր հետևանքները: Պատմութիւնը անպատճիչ չի թունում իր օրէնքների դէմ ուղղած վտանգաւոր «թոփչըները»...

Պատմական այդ «պատիժի» ծանր երկունքն է, որ մաշում է արդէն այժմ համառուս գժրադդ երկիրը:

Զեռագիրս վերջացած էր և գրուածքը շարուած, երբ ստացուեց Հիմնադիր Ժողովի ցրման ցնցող տեղեկութիւնը: Կատարուեց համաշխարհային պատմութեան մէջ չտեսնուած ամենամեծ ոճրագործութիւնը: Դեմօկրատական քառանդամ սիստեմով ընտրուած և անդամներից 90% սօցիալիստական և դեմօկր. կազմ ունեցող Հիմ. Ժող. գէնքի հարուածներով քշում է մի կուսակցութիւն, որը իրան անուանում է և դեմօկրատական և սօցիալիստական: Բաւական է այս վասարը իր ամբողջ մերկութեամբ զնել եւրոպական պրօլետարիատի և դեմօկրատիայի, ըստ առական սօցիալիստական Խոտերնացիօնալի քննութեան առաջ սպասուած դատավճիրը ստանալու համար: Զկայու մի «մեղմացուցիչ դէպք յանցանաց», չկայ ոչ մի արարացում այդ անօրինակ, այդ պարագօքսալ ոճրագոր-

ծութեան համար, ժողովրդական գերազոյն իրաւունքների այդ անգութ ըսնաբարութեան և ժանդարմիական յափշտակութեան համար, ճիշտ այնպէս, ինչպէս չկայ ոչ մի արդարացում անմեղ քաքաքացիների գոյքը յափշտակող և իրաւունք ու պատիւ բանաբարող աւազակային շայլայի ոճրագործութեան համար: Բօլշեվիկների անորակելի ոճրագործութիւնը կարող են մեղմացնել կամ արդարացնել միայն որոշ կաթետօրիայի մարդիկ. Նրանք, որոնց կամ ուղեղն է բարբորուած, կամ գրիչն է կաշառուած և կամ միտքն է պոռնկացած (խօսքս չի վերաբերում արգահատանքի արժանի խաբուած ու մոլորուած տգէտ մասսաներին): «Կարմիր թիկնապահներ» կոչուած գունդը մահափորձի ձեռք է բարձրացնում այն դէմքերի վրայ, որոնք նահատակուելու չափ տառապել ու կեանք են մաշել ոռւսական սոցիալիզմի և յեղափոխութեան համար, և այն հաստատութեան վրայ, որը ամեն մի ազատազրւող ժողովրդի երազական տենչանքն է կազմել: «Հիմնադիր ժողովի ցրումը կիւղովիկոս ԽVI-րդի միջոցով — գրում է ընկեր Ն. Ժօրդանիան — տուել է յեղափոխութիւն: Զորրորդ Պետական Դումայի ցրումը խորտակել է Նիկոլայ Ա-ի գահը: Ռուս. Հիմնադիր ժողով. ցրումը հաւանորէն կարժենայ կենինի գլխի զինը»: («Հայոց Պոլոս» № 5): Մեղամենին չի հետաքրրում պ. կենինի կամ պ. Տրօցկու վիճակը: Մեզ հետաքրրում է և մտատանջում է այն ակնյայտնի երկոյթը, որ բօլշեվիկական «Կրասնօվարդեյց»-ների կարմիր դրօշակի տակ փաստօրէն կազմակերպւում և զըլուխ է բարձրացնում սև հարիւրեակային Ռուսիան: Ահա որտեղ է ահաւոր փանգը: Դա ուստական յեղափոխութեան վերջին էտապի, չարագուշակ վիալեկտիկան է: Ուշքի եկեք, համաւում առնօրեալարի առնելու վերաբերութիւն, քանի ուշ չէ:

Բ. Իշխանեանի առանձին լոյս տեսած աշխատութիւնները:

1. «Ճաճկահայ ինդիրը և միջազգային դիպլոմատիան», Թիֆլիս, 1907 թ., եր. 140 (սպառուած) 40 կ.
2. «Թիւրքիայի ապագան», Թիֆլիս, 1908 թ., եր. 58, (սպառուած) 20 կ.
3. «Ճնտեսական զարգացման փաղերը», Թիֆլիս, 1906 թ., եր. 58, (սպառուած) 20 կ.
4. «Ազգային պրօգրեսը և գասակարգային շահերը», Թիֆլիս, 1908 թ., եր. 310, (սպառուած) 60 կ.
5. «Աշխատանքի և աշխատաւորի գաղափարը Աղանեգրիի, Յ. Յակոբեանի և Շ. Կուրդինեանի բանաստեղծութիւնների մէջ», Նոր-Նախիջևան, 1909 թ., եր. 49, (սպառուած) 20 կ.
6. «Հասարակական գաղափարները Ռ. Պատկանեանի և Ս. Շահազիզի բանաստեղծութիւնների մէջ», (սոց. վերլ.) Թիֆլիս, հրատ. Գուտահմբերգի, 1910 թ., եր. 447 1 ր.
7. «Wesen und Geschichte des Ausländertums in Russland», Բերլին, 1912 թ., եր. 64.
8. «Die ausländischen Elemente in der russischen Volkswirtschaft», (historisch - ökonomische Untersuchungen), Verl. Fr. Siemenroth, Բերլին, 1913 թ., եր. XII + 300 7 մարկ.
9. «Nationaler Bestand, berufsmässige Gruppierung und soziale Gliederung der kaukasischen Völker» (statistisch-ökonomische Untersuchungen), Բերլին, 1914 թ., եր. 81, (Göschensche Verlagsbuchhandlung) 2 մարկ.
10. «Экономическая и общественные основы армяно-грузинского антагонизма» (критический анализ), Երատ. Գուտահմբերգի, Թիֆլիս, 1914 թ., եր. 96 40 կ.
11. «Կովկաս. ժողովրդ. ազգաբնակչ. կազմը, պրօֆես. խմբաւորումը և սոց. չերտաւորումը» Երատ. Գուտահմբերգի, Թիֆլիս, 1914 թ., եր. 208 75 կ.
12. «Հայ-վրացական յարաբերութիւնների պրօբլեմը», Թիֆլիս, 1914 թ., եր. 97 20 կ.

13. «Нѣмецкій профессоръ о германскомъ шовинизмѣ» (факты и разоблаченія), *Գետրօգրադ*, 1915 թ., եր. 27, (սպառ.) 15 կ.
14. «Գերմանիայի և Թիւրքիայի սնտեսա-քաղաքական
փոխ-յարաբերութիւնները» (քննական տեսութիւն) Թիֆ-
լիս, 1915 թ., եր. 64, (սպառուած) 40 կ.
15. «Աղէտի և տառապանքի աշխարհից» (Այց Թիւրքա-
նայ գաֆստականներին), Թիֆլիս, 1915 թ., եր. 78,
(սպառուած) 40 կ.
16. «Народности Кавказа» (статистико-экономическое изслѣ-
дование), съ предисл. С. Патканова, изд. М. В. Попова, *Գետ-
րօգրադ*, 1917 թ., եր. 116, (սպառուած) 1 р. 50 կ.
17. «Развитіе милитаризма и имперіализма въ Германіи»
(историко-экономическое изслѣд.) съ предисл. проф. М. Туганъ-
Барановскаго, изд. «Книга», *Գետրօգրադ*, 1917 թ., եր.
ХI+352, (սպառուած) 3 р.
-

ԳԻՆՆԵ Հ Յ ՌՈՒԲԼԻ

ՀՀ Ազգային գրադարան



NL0200435

